# «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*
*Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

# Բովանդակություն

## Անկախ աուդիտորական եզրակացություն

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ


Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ........ 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ........ 2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ........ 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ........ 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ........ 5


## Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


1. Հիմնական գործունեության նկարագրություն ........ 6
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները ........ 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր ........ 7
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ ........ 30
5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն ........ 31
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ........ 33
7. Ածանցյալ ֆինանսական գործիքներ ........ 33
8. Պահանջներ բանկերի նկատմամբ ........ 34
9. Ներդրումային արժեթղթեր ........ 35
10. Հաճախորդներին տրված վարկեր ........ 36
11. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ ........ 42
12. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ........ 44
13. Հարկում ........ 45
14. Վարկային կորուստների գծով ծախս, այլ արժեզրկում և պահուստներ ........ 46
15. Այլ ակտիվներ ........ 47
16. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ ........ 47
17. Թողարկված պարտքային արժեթղթեր ........ 48
18. Այլ փոխառություններ ........ 48
19. Այլ պարտավորություններ ........ 49
20. Կապիտալ ........ 49
21. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ ........ 49
22. Զուտ տոկոսային եկամուտ ........ 51
23. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ ........ 51
24. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից ........ 52
25. Այլ եկամուտ ........ 52
26. Այլ գործառնական ծախսեր ........ 52
27. Այլ ընդհանուր վարչական ծախսեր ........ 52
28. Ռիսկերի կառավարում ........ 53
29. Իրական արժեքի չափում ........ 65
30. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և գրավադրված կամ որպես գրավ պահվող ակտիվներ ........ 68
31. Ֆինանսական գործիքների հաշվանցում ........ 69
32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն ........ 70
33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ ........ 71
34. Դուստր կազմակերպություններ ........ 72
35. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում ........ 72
36. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն ........ 72
37. Կապիտալի համարժեքություն ........ 73

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

### *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերության (այսուհետ՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### *Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Աուդիտի առանցքային հարցեր*

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և համախմբված հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում, այդ թվում այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

| Աուդիտի առանցքային հարց | Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացքում |
|---|---|
| ***Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստ*** | |
| Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների էականության (Խմբի ընդհանուր ակտիվների 63.3%-ը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), այնպես էլ նոր ընդունված ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով:<br><br>Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները:<br><br>Արժեզրկված էական ֆինանսական ակտիվների համար անհատական հիմունքով ԱՎԿ հաշվարկը պահանջում է հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից ապագա դրամական հոսքերի գնահատում:<br><br>Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող էր հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող էր նշանակալի ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական արդյունքների վրա:<br><br>Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ գծով արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 10-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր», Ծանոթագրություն 11-ում՝ «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» և Ծանոթագրություն 28-ում՝ «Ռիսկերի կառավարում»: | Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝<br><br>▸ Պորտֆելային հիմունքով ԱՎԿ որոշելու համար կիրառված վարկային ռիսկի մոդելների և ենթադրությունների գնահատում,<br>▸ Հաճախորդներին տրված էական արժեզրկված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով ապագա գնահատված դրամական հոսքերի թեստավորում:<br><br>Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և արժեզրկված վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը:<br><br>Արժեզրկված էական վարկերի գծով մենք թեստավորել ենք հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից ապագա գնահատված դրամական հոսքերի հաշվարկները:<br><br>Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Խմբի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող բացահայտումների նկատմամբ: |

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

*Խմբի 2018 թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն*

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի համախմբված ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է՝ ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

*Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձությունները ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն էրիկ Հայրապետյանն է:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

17 ապրիլի, 2019 թ.

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**
**2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**
*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6 | 72,304,963 | 70,331,906 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 7 | 4,368 | 27,426 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 8 | 5,695,811 | 9,015,614 |
| Ներդրումային արժեթղթեր | 9 | | |
| - Խմբի կողմից պահվող | | 27,041,605 | 19,184,517 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված | | – | 1,514,868 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 10 | 206,012,527 | 177,513,735 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 11 | 15,257,457 | 12,884,745 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 35 | 596,093 | 382,467 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 12 | 18,402,039 | 17,383,076 |
| Այլ ակտիվներ | 15 | 4,177,102 | 2,682,598 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **349,491,965** | **310,920,952** |
| | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 7 | 49,019 | 140,968 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | 31,523 | 55,091 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 30 | – | 1,510,896 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 16 | 201,775,444 | 166,550,033 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 17 | 9,031,081 | 7,910,311 |
| Այլ փոխառություններ | 18 | 68,569,714 | 67,546,218 |
| Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով | | 1,001,950 | 833,453 |
| Հետաձգված պարտավորություններ շահութահարկի գծով | 13 | 387,353 | 809,099 |
| Այլ պարտավորություններ | 19 | 4,956,585 | 5,261,230 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **285,802,669** | **250,617,299** |
| | | | |
| **Կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 20 | 30,000,000 | 30,000,000 |
| Հիմնական միջոցների վերագնահատումից աճ | | 3,047,359 | 3,075,773 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | | 2,032,196 | 2,149,032 |
| Չբաշխված շահույթ | | 28,609,741 | 25,078,848 |
| **Ընդամենը կապիտալ** | | **63,689,296** | **60,303,653** |
| **Ընդամենը կապիտալ և պարտավորություններ** | | **349,491,965** | **310,920,952** |

**Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝**

Հակոբ Անդրեասյան — Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան — Գլխավոր հաշվապահ

17 ապրիլի, 2019 թ.

*1-37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

**Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն**
**2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**
*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 22,2 | 30,552,744 | 30,954,049 |
| Այլ տոկոսային եկամուտ | 22,2 | 1,393,230 | 1,111,586 |
| Տոկոսային ծախս | 22 | (14,176,552) | (14,846,434) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **17,769,422** | **17,219,201** |
| Վարկային կորուստների գծով ծախս | 14,2 | (295,159) | (2,537,572) |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո** | | **17,474,263** | **14,681,629** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 23 | 4,146,272 | 3,856,429 |
| Միջնորդավճարների գծով ծախս | 23 | (1,730,103) | (1,442,317) |
| Զուտ օգուտ/(վնաս)/ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | | 1,931,600 | (451,323) |
| Զուտ օգուտ վաճառված վարկերի գծով | 10 | 993,553 | – |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 24 | 115,795 | 2,092,708 |
| Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս | | 223,631 | 96,282 |
| Այլ եկամուտ | 25 | 1,872,224 | 2,985,264 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | | **7,552,972** | **7,137,043** |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (9,825,258) | (8,566,729) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 12 | (1,068,790) | (1,062,736) |
| Այլ գործառնական ծախսեր | 26 | (1,717,005) | (1,652,037) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 27 | (4,133,837) | (3,246,741) |
| Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր | 15 | (209,239) | (101,939) |
| **Ոչ տոկոսային ծախս** | | **(16,954,129)** | **(14,630,182)** |
| **Շահույթ մինչև շահութահարկ** | | **8,073,106** | **7,188,490** |
| Շահութահարկի գծով ծախս | 13 | (1,825,618) | (1,624,433) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **6,247,488** | **5,564,057** |
| **Վերագրելի՝** | | | |
| - Բանկի բաժնետերերին | | 6,247,488 | 5,495,156 |
| - Չվերահսկվող բաժնեմասին | | – | 68,901 |
| | | 6,247,488 | 5,564,057 |

*1-37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն**
**2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**
*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|---|
| Հաշվետու տարվա շահույթ | | 6,247,488 | 5,564,057 |
| **Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո** | | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որոշակի պայմանների բավարարման դեպքում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ`* | | | |
| Զուտ օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից | | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | | – | 798,744 |
| - Շահութահարկի ազդեցություն | | – | (159,749) |
| Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/(վնաս) | | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | | (766,477) | – |
| - Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ | | 310,906 | – |
| Շահութահարկի ազդեցություն | 13 | 91,114 | – |
| **Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ** | | **(364,457)** | **638,995** |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ`* | | | |
| Շենքերի /Փոխադրամիջոցների վերագնահատում | | (11,027) | 107,067 |
| Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով օգուտ | | 209,098 | – |
| Շահութահարկի ազդեցություն | 13 | (39,614) | (21,413) |
| **Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ** | | **158,457** | **85,654** |
| *Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս`* | | | |
| Որոշակի պայմաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող | | – | 28,181 |
| Շահութահարկի ազդեցություն | 13 | – | (5,636) |
| **Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս** | | **–** | **22,545** |
| **Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս/(եկամուտ) հարկումից հետո** | | **(206,000)** | **747,194** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | | **6,041,488** | **6,311,251** |
| **Վերագրելի`** | | | |
| - Բանկի բաժնետերերին | | 6,041,488 | 6,242,350 |
| - Չվերահսկվող բաժնեմասին | | – | 68,901 |
| | | **6,041,488** | **6,311,251** |

*1-37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
## 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Բանկի բաժնետերերին վերագրելի* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Բաժնետիրական կապիտալ* | *Հողի և շենքերի վերագնահատումից աճ* | *Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ* | *Չբաշխված շահույթ* | *Ընդամենը* | *Չվերահսկվող բաժնեմաս* | *Ընդամենը կապիտալ* |
| **2017 թ. հունվարի 1-ի դրությամբ** | 30,000,000 | 2,990,119 | 1,487,492 | 20,501,757 | 54,979,368 | 1,615,727 | 56,595,095 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | | | | | |
| Հաշվետու տարվա շահույթ | – | – | – | 5,495,156 | **5,495,156** | 68,901 | **5,564,057** |
| Այլ համապարփակ եկամուտ | – | 85,654 | 661,540 | – | **747,194** | – | **747,194** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **–** | **85,654** | **661,540** | **5,495,156** | **6,242,350** | **68,901** | **6,311,251** |
| **Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում** | | | | | | | |
| Դուստր կազմակերպությունում բաժնեմասի ավելացում | – | – | – | 81,935 | **81,935** | (1,684,628) | **(1,602,693)** |
| Հայտարարված շահաբաժիններ | – | – | – | (1,000,000) | **(1,000,000)** | – | **(1,000,000)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | **–** | **–** | **–** | **(918,065)** | **(918,065)** | **(1,684,628)** | **(2,602,693)** |
| **2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **30,000,000** | **3,075,773** | **2,149,032** | **25,078,848** | **60,303,653** | **–** | **60,303,653** |
| ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը (Ծան. 3) | – | – | 80,342 | 1,013,813 | **1,094,155** | – | **1,094,155** |
| **ՖՀՄՍ 9-ի համաձայն վերահաշվարկված սկզբնական մնացորդ** | **30,000,000** | **3,075,773** | **2,229,374** | **26,092,661** | **61,397,808** | **–** | **61,397,808** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | | | | | |
| Հաշվետու տարվա շահույթ | – | – | – | 6,247,488 | **6,247,488** | – | **6,247,488** |
| Այլ համապարփակ եկամուտ | – | (8,822) | (197,178) | – | **(206,000)** | – | **(206,000)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | **–** | **(8,822)** | **(197,178)** | **6,247,488** | **6,041,488** | **–** | **6,041,488** |
| Փոխադրամիջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին | – | (19,592) | – | 19,592 | **–** | – | **–** |
| **Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում** | | | | | | | |
| Հայտարարված շահաբաժիններ | – | – | – | (3,750,000) | **(3,750,000)** | – | **(3,750,000)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | **–** | **–** | **–** | **(3,750,000)** | **(3,750,000)** | **–** | **(3,750,000)** |
| **2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 30,000,000 | 3,047,359 | 2,032,196 | 28,609,741 | 63,689,296 | – | 63,689,296 |

*1-37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

## Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
## 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Ծան.* | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 31,544,387 | 32,330,849 |
| Վճարված տոկոսներ | | (13,667,677) | (14,450,265) |
| Ստացված միջնորդավճարներ | | 4,146,272 | 3,856,429 |
| Վճարված միջնորդավճարներ | | (1,730,104) | (1,442,317) |
| Զուտ մուտքեր/(ելքեր) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից | | 1,931,600 | (451,323) |
| Զուտ (մուտքեր փոխարժեքային տարբերություններից | | 1,395,245 | 1,422,277 |
| Վճարված այլ գործառնական ծախսեր | | (1,409,520) | (1,367,950) |
| Ստացված այլ եկամուտ | | 1,872,225 | 3,215,374 |
| Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ | | (9,620,512) | (7,482,635) |
| Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր | | (4,135,943) | (3,246,741) |
| **Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը** | | **10,325,973** | **12,383,698** |
| | | | |
| *Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում* | | | |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | | 23,049 | (2,418) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | 3,282,569 | (908,079) |
| Հաճախորդներին տրված վարկեր | | (27,418,186) | (15,019,314) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | | (2,407,878) | (2,734,730) |
| Այլ ակտիվներ | | (1,667,759) | (695,756) |
| | | | |
| *Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)* | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | | (92,057) | 139,256 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | (23,739) | 20,618 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | (1,510,213) | 1,512,122 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | 34,488,894 | 43,667,167 |
| Այլ պարտավորություններ | | (495,130) | 1,101,434 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը** | | **14,505,523** | **39,463,998** |
| | | | |
| Վճարված շահութահարկ | | (2,302,468) | (787,842) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից** | | **12,203,055** | **38,676,156** |
| | | | |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (2,468,694) | (3,241,262) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր | | 14,697 | 27,589 |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | | (8,967,011) | (2,411,740) |
| Ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում | | 3,327,984 | 8,814,573 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունում** | | **(8,093,024)** | **3,189,160** |
| | | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Դուստր կազմակերպությունում բաժնեմասի ավելացում | 34 | – | (1,602,693) |
| Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր | 36 | 2,511,431 | 6,789,346 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | 36 | (1,450,982) | (18,372,880) |
| Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր | 36 | 29,961,360 | 15,133,284 |
| Այլ փոխառությունների մարումներ | 36 | (29,182,395) | (28,161,852) |
| Վճարված շահաբաժիններ | 20 | (3,750,000) | (1,000,000) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ֆինանսավորման գործունեությունում** | | **(1,910,586)** | **(27,214,795)** |
| | | | |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (150,124) | 105,522 |
| Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (76,264) | – |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **1,973,057** | **14,756,043** |
| | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին | | 70,331,906 | 55,575,863 |
| | | | |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին** | 6 | 72,304,963 | 70,331,906 |

*1-37 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:*

*(հազար ՀՀ դրամ)*

## 1. Հիմնական գործունեության նկարագրություն

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպությունից՝ «ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ից (միասին՝ «Խումբ»): Այն ձևավորվել է 1995թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և 2006թ.-ին ճանաչվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, և այն ունի 58 մասնաճյուղեր (ներառյալ՝ գլխամասը) Երևանում և ՀՀ այլ մարզերում: Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպությունը ձևավորվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա՝ տրված ՀՀ ԿԲ-ի կողմից: Ընկերությունը հանդիսանում է Խմբի դուստր կազմակերպություն և համախմբվում է սույն ֆինանսական հաշվետվություններում:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են

| *Բաժնետեր* | *2018 թ.* *%* | *2017 թ.* *%* |
|---|---|---|
| «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ | 93.50 | 72.00 |
| Կրեդիտ Ագրիկոլ Ս.Ա. | – | 15.56 |
| Սակամ Ինտերնասիոնալ | 6.50 | 12.44 |
| **Ընդամենը** | 100.00 | 100.00 |

Խմբի վերջնական վերահսկող մայր կազմակերպությունն «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն է:

## 2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### Ընդհանուր մաս

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օրինակ՝ ներդրումային արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները, հողը, շենքերը և փոխադրամիջոցները գնահատված են իրական արժեքով:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ:

*(հազար ՀՀ դրամ)*

## 2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

### Վերադասակարգումներ

ՖՀՄՍ 9-ի ընդունումից հետո Բանկը վերանայել է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացումը` ՖՀՄՍ 9-ի համաձայն հաշվարկված արժեզրկումից կորուստները որպես մեկ հոդված ներկայացնելու նպատակով: Համապատասխանաբար, 2018 թ. ներկայացման հիմունքներին համապատասխանեցվելու համար 2017 թ. համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ կատարվել են արժեզրկումից կորուստների գծով հետևյալ վերադասակարգումները`

| | *Նախկինում* | *Վերադասա-կարգում* | *Ճշգրտված* |
|---|---|---|---|
| Վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստի ձևավորման գծով ծախս | 2,537,572 | (2,537,572) | – |
| Վարկային կորուստների գծով ծախս | – | (2,537,572) | (2,537,572) |
| Տոկոսային եկամուտ | 32,065,635 | (32,065,635) | – |
| Տոկոսային եկամուտ` հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | – | 30,954,049 | 30,954,049 |
| Այլ տոկոսային եկամուտ | – | 1,111,586 | 1,111,586 |

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Խումբն առաջին անգամ կիրառել է *ՖՀՄՍ 15 և ՖՀՄՍ 9: Այս նոր հաշվապահական ստանդարտները կիրառելիս առաջացող փոփոխությունների բնույթն և ազդեցությունը ներկայացված է ստորև:*

Խումբը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը չի կիրառել որևէ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ: Փոփոխությունների էությունը և ազդեցությունները նկարագրված են ստորև.

*ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ*

ՖՀՄՍ 9 փոխարինում է ՀՀՄՍ 39 *Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը* ստանդարտին 2018 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Խումբը չի վերահաշվարկել ֆինանսական գործիքների գծով 2017 թ. համեմատական տեղեկատվությունը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում: Հետևաբար, 2017 թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համադրելի չէ 2018 թ. ներկայացված տեղեկատվության հետ: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջ եկած տարբերությունները ուղղակիորեն ճանաչվել են 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում և բացահայտված են ստորև:

*(ա) Դասակարգումը և չափումը*

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին հիմնված է բիզնես մոդելի վրա, որով կառավարվում են տվյալ գործիքները`

- Գործիքները, որոնք կառավարվում են «հավաքագրման համար պահվող» հիմունքով, չափվում են ամորտիզացված արժեքով,
- Գործիքները, որոնք կառավարվում են «հավաքագրման և վաճառքի համար պահվող» հիմունքներով, չափվում են իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով (FVOCI),
- Այլ հիմունքներով կառավարվող գործիքները, այդ թվում` առևտրային ֆինանսական ակտիվները, չափվում են իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL):

Բաժնային ֆինանսական ակտիվները պահանջվում է դասակարգել սկզբնական ճանաչման պահին իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով, եթե չի կայացվել որոշում (որը ենթակա չէ վերանայման)` դրանք դասակարգել որպես իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող: Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային ներդրումների գծով բոլոր իրացված և չիրացված օգուտները և վնասները, բացի շահութաբաժինների գծով եկամտից, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց հետագա դասակարգման շահույթում և վնասում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և գնահատումը հիմնականում մնում է անփոփոխ ՀՀՄՍ 39-ի ընթացիկ պահանջների համաձայն: Ածանցյալ գործիքները կշարունակեն չափվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պարունակվող ածանցյալ գործիքները այլևս չեն առանձնացվում ֆինանսական ակտիվից, որոնց մասն են կազմում:

*(բ) Արժեզրկում*

ՖՀՄՍ 9-ի ընդունմամբ հիմնավորապես փոխվել է Խմբի կողմից վարկերի արժեզրկման հաշվառումը. ՀՀՄՍ 39-ով նախատեսված կրած վնասների մոտեցումը փոխարինվել է հետագա ժամանակաշրջաններում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: 2018 թ. հունվարի 1-ից Խումբը ճանաչում է պահուստներ ակնկալվող վարկային կորուստների գծով բոլոր վարկերի և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ պարտքային ֆինանսական ակտիվների գծով, ինչպես նաև վարկային բնույթի պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար: Բաժնային գործիքները արժեզրկման ենթակա չեն համաձայն ՖՀՄՍ 9-ի:

Պահուստի հիմքում ընկած է ԱՎԿ-ն՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ՝ սկզբնական ճանաչումից հետո: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է ձեռք բերված կամ ստեղծած արժեզրկված վարկի սահմանմանը (POCI), ապա պահուստը հիմնվում է ակտիվի կյանքի ընթացքում ԱՎԿ փոփոխության վրա: Խմբի կողմից կիրառվող արժեզրկման մեթոդների մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 31-ի (գ) ենթակետում: 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտված է ստորև՝ բաժին (գ)-ում:

*(գ) ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը*

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա, ներառյալ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն կրած վարկային կորուստների վրա հիմնված հաշվարկը ՖՀՄՍ 9-ի համաձայն ԱՎԿ մոտեցմամբ փոխարինելու ազդեցությունը:

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀՄՍ 39-ի համաձայն հրապարակված հաշվեկշռային արժեքների և ՖՀՄՍ 9- ի համաձայն մնացորդների համաձայնեցումը հետևյալն է.

| | | *Գնահատումը ՀՀՄՍ 39-ով* | | | *ՖՀՄՍ 9* | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| *հազ. դրամ* | *Հղում* | *Դասա-կարգում* | *Գումար* | *Վերադասա-կարգում* | *ԱՎԿ* | *Գումար* | *Դասակարգում* |
| ***Ֆինանսական ակտիվներ*** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | L&R[1] | 70,331,906 | – | (33,144) | 70,298,762 | Ամորտիզացված արժեք |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | FVPL | 27,426 | – | – | 27,426 | FVPL (պարտադիր) |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | | L&R | 9,015,614 | – | (31,285) | 8,984,329 | Ամորտիզացված արժեք |
| Հաճախորդներին տրված վարկեր. ամորտիզացված արժեք | | L&R | 177,513,735 | – | 1,485,168 | 178,998,903 | Ամորտիզացված արժեք |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | | L&R | 12,884,745 | – | 44,563 | 12,929,308 | Ամորտիզացված արժեք |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ՝ Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ակտիվները ներառյալ | | AFS[2] | 20,699,385 | (20,699,385) | – | – | |
| *Վերադասակարգում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներին* | | | – | *20,699,385* | – | – | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | | – | 20,699,385 | – | 20,699,385 | FVOCI |
| *Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից* | | | – | *(20,699,385)* | – | – | |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | L&R | 1,418,213 | – | (7,792) | 1,410,421 | Ամորտիզացված արժեք |
| **Ընդամենը ակտիվներ** | | | **291,891,024** | **–** | **1,457,510** | **293,348,534** | |
| **Ոչ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | | 786,548 | – | 273,541 | 1,060,087 | |
| Պահուստներ | | | – | – | 89,814 | 89,814 | |
| **Ընդամենը պարտավորություններ** | | | **786,548** | **–** | **363,355** | **1,149,901** | |

1 L&R: Վարկեր և դեբիտորական պարտքեր

2 AFS: Վաճառքի համար մատչելի

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

| | *Պահուստներ և չբաշխված շահույթ հազ. դրամ* |
|---|---|
| **Իրական արժեքի պահուստ** | |
| **Վերջնական մնացորդը ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017 թ. դեկտեմբերի 31)** | **2,149,032** |
| Ակնկալվող վարկային կորուստների ճանաչում ըստ ՖՀՄՍ 9-ի՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների համար | 176,065 |
| Ասոցիացված կազմակերպությունների ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը | (75,637) |
| Վերոնշյալին վերաբերող հետաձգված հարկ | (20,086) |
| **ՖՀՄՍ 9-ի համաձայն վերահաշվարկված սկզբնական մնացորդ (2018թ հունվարի 1)** | **2,229,374** |
| **Չբաշխված շահույթ** | |
| **Վերջնական մնացորդը ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017 թ. դեկտեմբերի 31)** | **25,078,848** |
| ՖՀՄՍ 9-ի համաձայն ԱՎԿ-ի ճանաչում՝ ներառյալ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող գործիքների համար | 1,191,631 |
| Ասոցիացված կազմակերպությունների ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը | 75,635 |
| Վերոնշյալին վերաբերող հետաձգված հարկ | (253,453) |
| **Վերանայված սկզբնական մնացորդը ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018 թ. հունվարի 1)** | **26,092,661** |
| **Ընդամենը փոփոխություն կապիտալում ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում** | **1,094,155** |

Հետևյալ աղյուսակը համադրում է սկզբնական վարկային կորստի պահուստները համաձայն ՀՀՄՍ 39-ի և վարկային պարտավորվածությունների ու ֆինանսական երաշխիքի պայմանագրերի գծով պահուստները համաձայն ՀՀՄՍ 37-ի *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՖՀՄՍ 9-ով սահմանված ԱՎԿ պահուստների հետ:

| *հազ. դրամ* | *Վարկային կորստի պահուստ / պահուստներ ըստ ՀՀՄՍ 39-ի / ՀՀՄՍ 37-ի 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Վերաչափում* | *Ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) դասակարգման ազդեցությունը ԱՎԿ-ի վրա* | *ԱՎԿ ըստ ՖՀՄՍ 9-ի 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ* |
|---|---|---|---|---|
| Արժեզրկման պահուստ | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | – | 33,144 | – | 33,144 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | – | 31,285 | – | 31,285 |
| Հաճախորդներին տրված վարկեր. ամորտիզացված արժեքով | 15,984,887 | (1,485,168) | (2,238,320) | 12,261,399 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 269,762 | (44,563) | – | 225,199 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | – | 7,792 | – | 7,792 |
| Վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումային արժեթղթեր ըստ ՀՀՄՍ 39-ի / Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներ ըստ ՖՀՄՍ 9-ի | – | 176,065 | – | 176,065 |
| | 16,254,649 | (1,281,445) | (2,238,320) | 12,734,884 |
| Ֆինանսական երաշխիքներ | – | 134 | – | 134 |
| Ակրեդիտիվներ | – | 1,301 | – | 1,301 |
| Այլ պարտավորություններ | – | 88,379 | – | 88,379 |
| | **–** | **89,814** | **–** | **89,814** |
| | 16,254,649 | (1,191,631) | (2,238,320) | 12,824,698 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

*ՖՀՄՄԿ մեկնաբանություն 22՝ «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ»*

Մեկնաբանությամբ հստակեցվում է, որ կանխավճարի արդյունքում ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության ապաճանաչման ժամանակ առաջացող համապատասխան ակտիվի, ծախսերի և եկամուտների (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչել է կանխավճարից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Եթե տեղի են ունեցել բազմակի կանխավճարային ելքեր կամ մուտքեր, ապա կազմակերպությունը պետք է որոշի կանխավճարի յուրաքանչյուր ելքի կամ մուտքի գործարքի ամսաթիվը: Այս մեկնաբանությունը որևէ ազդեցություն չունի Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»*

ՖՀՄՍ 15-ը, որը հրապարակվել է 2014 թ.-ի մայիսին և փոփոխվել 2016 թ.-ի ապրիլին, սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց: Սակայն ստանդարտը կիրառելի չէ ֆինանսական գործիքների և վարձակալությունների հետ կապված եկամուտների համար և, հետևաբար ազդեցություն չունի Խմբի հասույթի մեծ մասի վրա՝ ներառյալ տոկոսային եկամտի, արժեթղթերով գործառնություններից օգուտների/(վնասների), վարձակալությունից եկամտի վրա, որոնք կարգավորվում են ՖՀՄՍ 9-ով *«Ֆինանսական գործիքներ»* և ՖՀՄՍ 16-ով *«Վարձակալություն»*: Արդյունքում ՝ նոր ստանդարտի ընդունումը ազդեցություն չունի Խմբի հասույթի և սեփական կապիտալի վրա 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 28-ում « *Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում*». պարզաբանում առ այն, որ ներդրումների չափումը իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով առանձին ներդրման ընտրություն է:

Փոփոխությունները հստակեցնում են, որ կազմակերպությունը, որը հանդիսանում է վենչուրային կապիտալ կազմակերպություն կամ այլ համանման որակավորում ունեցող կազմակերպություն, առանձին ներդրմանը բնորոշ որոշման սկզբունքով՝ սկզբնական ճանաչման ժամանակ իր ներդրումները ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում կարող է չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Եթե կազմակերպությունը ներդրումային կազմակերպություն չէ և ունի մասնակցություն ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ, որը ներդրումային կազմակերպություն է, ապա բաժնային մեթոդը կիրառելու դեպքում կարող է պահպանել իրական արժեքի գնահատումը, որը կիրառվել է այդ ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման կողմից՝ դրանց ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում ունեցած մասնակցությունների նկատմամբ: Այս ընտրությունը ամեն մի ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման համար կատարվում է առանձին, այն ամենաուշ ամսաթվի դրությամբ, երբ ա) ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը սկզբնապես ճանաչվում է, բ) ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը դառնում է ներդրումային ընկերություն, գ) ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը առաջինը անգամ դառնում է մայր կազմակերպություն: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Համախմբման հիմունքներ***

Դուստր ընկերությունները, որոնց գործունեության նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում, համախմբվում են: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, երբ Խումբն իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին,
- Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Որպես կանոն, ենթադրվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում, Խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ`

- ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են` այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալում փոփոխություն: Դուստր կազմակերպության վնասները վերագրվում են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է բացասական մնացորդի:

Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ` գուդվիլը) և պարտավորությունները, ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք, սեփական կապիտալում արտացոլվող փոխարկման կուտակված տարբերությունները, ճանաչում է ստացված փոխհատուցման իրական արժեքը, մնացած ներդրման իրական արժեքը, գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում, վերադասակարգում է նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերի մայր կազմակերպության բաժինը շահույթում կամ վնասում կամ չբաշխված շահույթում:

### Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են` օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար ձեռքբերող կողմը չափում է ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը, որը բաժնետերերին ներկա պահին էլ տալիս է ընկերության զուտ ակտիվներում համապատասխան բաժնի իրավունք ընկերության լուծարման դեպքում, կա՛մ իրական արժեքով, կա՛մ ձեռքբերված ընկերության որոշելի զուտ ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Չվերահսկվող բաժնեմասի այլ բաղադրիչները գնահատվում են ձեռքբերման պահին իրական արժեքով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են:

Եթե Խումբը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Սա ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատման անհրաժեշտության վերլուծությունը:

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռքբերողը ձեռքբերվող կազմակերպությունում իր նախկինում ունեցած բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռքբերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգվում է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում` մինչև կապիտալում ամբողջական մարումը:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ձեռնարկատիրական գործունեության միավորում (շարունակություն)

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկվող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռքբերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին, թե՝ ոչ:

Եթե գուդվիլը կազմում է դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մաս, և այդ ստորաբաժանման մի մասն օտարվում է, օտարվող մասին վերագրելի գուդվիլը ընդգրկվում է այդ գործունեության հաշվեկշռային արժեքի մեջ օտարումից շահույթը կամ վնասը որոշելիս: Այս պարագայում օտարվող գուդվիլը գնահատվում է օտարվող գործունեության արժեքի և դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մնացած մասի արժեքի հարաբերության հիման վրա:

*Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող դուստր կազմակերպությունների ձեռքբերումը*

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող դուստր կազմակերպությունների ձեռքբերման հաշվառումն իրականացվում է բաժնեմասերի միավորման մեթոդով:

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կողմերի միջև փոխանցված դուստր կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմում հաշվեկշռային արժեքով, որով արտացոլված են դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվության մեջ՝ փոխանցման ամսաթվի դրությամբ: Նախորդ սեփականատիրոջ կողմից կազմակերպության գնման ժամանակ առաջացած գուդվիլը նույնպես արտացոլվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման տարբերությունը ընդգրկվում է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ որպես սեփական կապիտալի ճշգրտում:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ համեմատական տվյալները, կազմվում են այնպես, եթե դուստր կազմակերպությունը ձեռք բերված լիներ Խմբի կողմից նախորդ սեփականատիրոջ կողմից սկզբնական ձեռքբերման ամսաթվով:

### Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված են համարվում այն կազմակերպությունները, որոնցում Խումբը ունի 20%-ից 50% քվեարկող բաժնեմաս կամ Խումբն ունի էական ազդեցության այլ հնարավորություններ, որը, սակայն, չի նշանակում լիովին վերահսկում: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը: Հաշվեկշռային արժեքի հետագա փոփոխությունները արտացոլում են միավորմանը հաջորդող Խմբի՝ ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվների բաժնեմասի փոփոխությունները: Խմբի՝ ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի բաժնեմասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստներում փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Այնուամենայնիվ, երբ Խմբի՝ ասոցիացված կազմակերպություններում վնասների բաժինը գերազանցում է իր բաժնեմասը ասոցիացված կազմակերպությունում, Խումբը չի ճանաչում հետագա կորուստները, եթե Խումբը չի պարտավորվում հետագա վճարումներ կատարել ասոցիացված կազմակերպությանը կամ ասոցիացված կազմակերպության անունից:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպության միջև գործարքներից չիրացված օգուտները բացառվում են մինչև Խմբի՝ ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասը. չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Իրական արժեքի չափում

Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 29-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Խումբը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Խումբն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Խումբը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

*Ճանաչման ամսաթիվ*

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

*Սկզբնական չափում*

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

*Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ*

2018 թվականի հունվարի 1-ից, Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է հաշվառել ֆինասական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը, Խումբն իր ֆինանսական ակտիվները դասակարգում էր որպես վարկեր և դեբիտորական պարտքեր (ամորտիզացված արժեքով), իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վաճառքի համար մատչելի կամ մինչև մարման ժամկետը պահվող (ամորտիզացված արժեքով) գործիքներ:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ, հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ, ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները, հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները ներառվում էին ֆիքսված կամ որոշելի վճարներով ոչ-ածանցյալ ֆինանսական ակտիվների կազմում, որոնք գնանշված չէին ակտիվ շուկայում, բացառությամբ այնպիսի ակտիվների՝

- որոնք Խումբը նպատակադրված է վաճառել այն անմիջապես կամ մոտ ապագայում,
- որոնք Խումբը սկզբնական ճանաչումից հետո հաշվառել է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ վաճառքի համար մատչելի,
- որոնց համար Խումբը չի կարող վերականգնել իր սկզբնական ներդրումները գրեթե ողջ ծավալով՝ վարկի արժեզրկումից տարբերվող այլ պատճառներով, որոնք հաշվառվել են որպես վաճառքի համար մատչելի:

2018 թ. հունվարի 1-ից, Խումբը չափում է Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները, հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝ :

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

*Բիզնես մոդելի գնահատում*

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Խումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

*Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ*

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ պարծատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Խումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ*

2018 թ. հունվարի 1-ից Խումբը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պարտքային գործիքների նոր դասակարգում ըստ ՖՀՄՍ 9-ի, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ*

2018 թ. հունվարի 1-ից սկզբնական ճանաչումից հետո Խումբը, երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

*Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և չվճարված վարկային պարտավորվածություններ*

Խումբը թողարկում է Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարների առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեքի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիայի տարբերության և ՀՀՄՍ 37-ի համաձայն (մինչև 2018 թ. հունվարի 1-ը)՝ երաշխիքի արդյունքում առաջացող որևէ ֆինանսական պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսի լավագույն գնահատման կամ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018 թ. հունվարի 1-ից)՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում, ՀՀՄՍ 39-ի համաձայն, սեփականատիրոջ պայմանագրի առկայության դեպքում հատկացվում էր պահուստ, սակայն 2018 թ. հունվարի 1-ից այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

*Կատարողական երաշխիքի պայմանագրեր*

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Կատարողական երաշխիքի պայմանագրերը վարկային ռիսկ չեն փոխանցում: Համաձայն կատարողական երաշխիքի պայմանագրի՝ ռիսկը, դա հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտավորությունը: Հետևաբար, կատարողական երաշխիքի պայմանագրերը չեն համարվում ֆինանսական գործիքներ և այդպիսով՝ չեն ընդգրկվում ՖՀՄՍ 9-ի շրջանակներում:

*Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ*

Մինչև 2018 թ.հունվարի 1-ը հաստատուն կամ սահմանված վճարումներով և հաստատուն մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք Խումբը հստակ մտադրված էր և ի վիճակի էր պահել մինչև մարման ժամկետի լրանալը, դասակարգվում էին որպես մինչև մարման ժամկետը պահվող: Ներդրումները, որոնք Խումբը մտադրված էր պահել անորոշ ժամկետով, չէին ներառվում տվյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների հետագա չափումը կատարվում էր ամորտիզացված արժեքով: Օգուտները և վնասները ճանաչվում էին շահույթում կամ վնասում, երբ ներդրումները արժեզրկվում էին, ինչպես նաև՝ ամորտիզացիայի ընթացքում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

*Վարկեր և դեբիտորական պարտքեր*

Մինչև 2018 թ. հունվարի 1-ը վարկերը և դեբիտորական պարտքերը հաստատուն կամ սահմանված վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ էին, որոնք գնանշված չէին ակտիվ շուկայում: Դրանք նախատեսված չէին անմիջապես կամ մոտ ապագայում վաճառքի համար և չէին դասակարգվում որպես առևտրային նպատակով պահվող կամ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր: Այդպիսի ակտիվները հաշվառվում էին ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում էին շահույթում կամ վնասում, երբ վարկերն ու դեբիտորական պարտքերը ապաճանաչվում կամ արժեզրկվում էին, ինչպես նաև՝ ամորտիզացիայի ընթացքում:

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Մինչև 2018 թ.հունվարի 1-ը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ էին, որոնք նախատեսված էին որպես վաճառքի համար մատչելի կամ ներառված չէին նախորդ դասերից որևէ մեկում: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում էին իրական արժեքով, ընդ որում՝ օգուտները կամ վնասները ճանաչվում էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների ապաճանաչումը կամ դրանց արժեզրկման մասին որոշման կայացումը: Այդ պահից սկսած, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում էր շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Այնուամենայնիվ, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում էին շահույթում կամ վնասում:

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների վերադասակարգում

2018 թ. հունվարի 1-ից Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

### Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները:

### Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները արտացոլվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղների հետ գործառնությունների ժամանակ ՀՀ ԿԲ գների փոփոխությունները հաշվառվում են որպես թանկարժեք մետաղների գործառնություններից գնային տարբերություններ այլ եկամուտների կազմում:

### Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործառնություններից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես առևտրական նպատակով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից զուտ շահույթ կամ վնաս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Ներդրված ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչն է, որը ներառում է ոչ ածանցյալ պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տարբերվում է առանձին ածանցյալ գործիքի նման: Ներդրված ածանցյալ գործիքը առաջացնում է որոշակի կամ բոլոր դրամական միջոցների հոսքերը, որոնք հակառակ դեպքում պայմանագրով պահանջվում է փոփոխվել `սահմանված տոկոսադրույքով, ֆինանսական գործիքի գինը, ապրանքի գինը, արտարժույթի փոխարժեքը, գների ինդեքսը կամ տոկոսադրույքը, վարկի վարկանիշը կամ վարկը: Ինդեքսը կամ այլ փոփոխական, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխության դեպքում այն կոնկրետ չէ պայմանագրի կողմի համար: Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ փոխանցվող ածանցյալ գործիքը կամ այդ գործիքից այլ հակասական կողմ ունի, ներգրավված ածանցյալ գործիք չէ, այլ առանձին ֆինանսական գործիք:

ՀՀՄՍ 39-ի համաձայն, ֆինանսական ակտիվների, պարտավորությունների և ոչ ֆինանսական հաշտարար շփումների մեջ ներգրավված ածանցյալ գործիքները վերաբերվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե դրանք հանդիպում են ածանցյալի (վերը նշվածով), նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն, որոնք վերաբերում են պայմանագրային պայմանագրին, և պայմանագրային պայմանագիրը իրեն չի համարվում առևտրի համար կամ նշանակված FVPL- ում: Ներդրվող ածանցյալ գործիքները առևտրային պորտֆելում իրական արժեքով հաշվառվել են շահույթի կամ վնասի համախմբված հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի փոփոխություններով:

2018 թվականի հունվարի 1-ից, ՖՀՄՍ 9-ի ներդրմամբ, Խումբը այս ձևով հաշվարկում է ֆինանսական պարտավորություններում և ոչ ֆինանսական հիփոթեքային պայմանագրերում ներգրավված ածանցյալ գործիքների համար: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI- ի գնահատումների հիման վրա:

*Մուրհակներ*

Գնված մուրհակները ներառվում են առևտրական նպատակով պահվող արժեթղթերում, պահանջներ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր հոդվածներում՝ կախված ձեռք բերման նպատակից և պայմաններից, և հաշվառվում են հաշվետվությունում ակտիվների համապատասխան դասերի նկատմամբ կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների հիման վրա:

### Փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնեմասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառման միջոցով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Վարձակալություն

*i. Ֆինանսական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձակալ*

Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը, որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով կամ ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև:

Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ:

*ii. Ֆինանսական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձատու*

Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

*iii. Գործառնական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձակալ*

Գույքի վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները հավասարաչափ ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

*iv. Գործառնական վարձակալություն՝ Խումբը, որպես վարձատու*

Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

### Ֆինանսական ակտիվների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում
- պարտականությունների չկատարման դեպքում
- կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Խումբը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

2018 թվականի հունվարի 1-ից Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- վարկի արժույթի փոփոխությունը
- եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի SPPI չափանիշին:.

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (EIR) զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Խումբը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով (EIR), այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված:

Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերակազմակերպված վարկերը, հավաստիանալու համար, որ բոլոր չափանիշները բավարարված են և, որ ապագա վճարումները կատարվելու են:

### Ֆինանսական ակտիվների արժեզրկում համաձայն ՀՀՄՍ 39-ի

Մինչև 2018 թ. հունվարի 1-ը Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում էր, թե արդյոք առկա էր որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող էր արժեզրկված լինել: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում էին արժեզրկված միայն և միայն այն դեպքում, եթե կար արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորստի դեպք») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեին ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի էր արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող էր ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենար սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված էին վճարման պարտավորությունների խախտման հետ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դեպքում արժեզրկման հայտանիշ է նաև ներդրման իրական արժեքի նշանակալի կամ երկարատև նվազումը իր սկզբնական արժեքի համեմատությամբ:

Խումբը գնահատում էր արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում էր ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերությունը (որը չի ներառում վարկերից՝ ապագայում սպասվող կորուստները, որոնք Խումբը դեռ չի կրել), զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դեպքում՝ ներդրման և իրական արժեքի տարբերությամբ: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում էր, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Տոկոսային եկամուտը շարունակում էր հաշվեգրվել նվազեցված հաշվեկշռային արժեքով՝ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դեպքում կիրառվում էր արժեզրկման կորստի չափման համար ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկման տոկոսադրույքը: Վարկերը, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս էին գրվում, եթե ապագայում չկար վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Խմբին:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվների արժեզրկում համաձայն ՀՀՄՍ 39-ի (շարունակություն)

Եթե հաջորդող տարվա ընթացքում գնահատված արժեզրկման ծախսն նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսն հակադարձվում էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ արտացոլելով: Վաճառքի համար մատչելի բաժնային գործիքներում ներդրումների արժեզրկումից վնասները չեն հակադարձվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության միջոցով. արժեզրկումից հետո իրական արժեքի աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում էին Խմբի ներքին վարկային գնահատման համակարգի հիման վրա, որը հաշվի էր առնում վարկային ռիսկի այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանցության կարգավիճակը և այլ հարակից գործոններ:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում էր խմբային հիմքով, որոշվում էին ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրերը համարժեք էին համանման ակտիվների խմբի բնութագրերին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում էին ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ չեզոքացնելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չէին ունեցել, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները: Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլվում և համապատասխանում էին դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ, գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում էին Խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում էին Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

ՖՀՄՍ 9-ի համաձայն արժեզրկման գնահատման մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ի (գ) ենթակետում:

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների ապաճանաչումը

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Խումբը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՜չ փոխանցել և ո՜չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Խումբը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Խմբից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների ապաճանաչումը (շարունակություն)

*Դուրս գրումը*

2018 թվականի հունվարի 1-ից, ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Խումբը դադարեցրել է վերականգնումը՝ կապված գրավի իրացման կամ դրա բռնագանձման ցածր հավանականությամբ: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

*Ֆինանսական պարտավորություններ*

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

### Հարկում

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուդվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի:

Փաստացի արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Ակտիվի օտարման դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

Ակտիվի մաշվածության հաշվարկումը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար մատչելի է դառնում: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

| | *Տարի* |
|---|---|
| Շենքեր | 50 |
| Վարձակալած գույքի բարելավում | 20 |
| Սարքավորումներ | 5-10 |
| Փոխադրամիջոցներ | 7-10 |
| Այլ | 7-10 |

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում, բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

### Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է Խմբի կողմից փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերության արժեքով: Դուստր ընկերության ձեռքբերման ժամանակ առաջացող գուդվիլը ճանաչվում է գուդվիլի և ոչ նյութական ակտիվների կազմում: Ասոցիացված կազմակերպության ձեռքբերման ժամանակ առաջացող գուդվիլը արտացոլվում է ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումների կազմում: Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Գուդվիլ (շարունակություն)

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով, ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Խմբի դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև, որոնք ակնկալվում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ՝ անկախ այն բանից, թե ձեռքբերված կազմակերպության այլ ակտիվներն ու պարտականությունները վերագրվում են այդ դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերին, թե՝ ոչ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը, պետք է.

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Խմբի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր
- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտը՝ համաձայն ՖՀՄՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի սահմանման:

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

### Ոչ նյութական ակտիվներ

Այլ ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված վնասները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 7-ից 10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են ոչ նյութական ակտիվի արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

*Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ*

Խումբը դասակարգում է ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով: Դրա համար ակտիվը (կամ օտարման խումբը) պետք է իր ներկա վիճակում պատրաստ լինի անմիջապես վաճառքի համար՝ միայն այդպիսի ակտիվների (կամ օտարման խմբերի) վաճառքների համար բնորոշ և ընդունված պայմաններով, իսկ դրա վաճառքը պետք է լինի բարձր հավանական:

Որպեսզի վաճառքը ունենա բարձր հավանականություն, Խմբի ղեկավարությունը պետք է հստակորեն նպատակադրված լինի պլանավորել վաճառել ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) և պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր: Ավելին, ակտիվը (կամ օտարման խումբը) իր ընթացիկ իրական արժեքի համեմատ ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում վաճառքի համար, բացի այդ պետք է ակնկալվի, որ դասակարգման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վաճառքը կհամարվի ավարտված:

Խումբը վաճառքի համար պահվող ակտիվը (կամ օտարման խումբը) չափում է հաշվեկշռային արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքից նվազագույնով: Խումբը ճանաչում է արժեզրկումից վնասներ՝ ակտիվի (կամ օտարման խմբի) արժեքի սկզբնական կամ հետագա՝ մինչև վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքը դուրսգրումների միջոցով, եթե իրադարձությունները կամ պայմանների փոփոխությունները վկայում են, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է արժեզրկված լինել:

### Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Կենսաթոշակի և աշխատակիցներին այլ հատուցումների գծով պարտավորություններ

Խումբը չունի կենսաթոշակային պայմանավորվածություններ և նշանակալի հետաշխատանքային հատուցումներ:

### Բաժնետիրական կապիտալ

*Բաժնետիրական կապիտալ*

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը, որոնք դիսկրեցիոն շահաբաժինների իրավունք են տալիս, դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում՝ որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

*Հետգնված բաժնետոմսեր*

Երբ Բանկը կամ իր դուստր կազմակերպությունները գնում են Բանկի բաժնետոմսերը, վճարված փոխհատուցումը, ներառյալ գործարքի հետ կապված ծախսերը և հանած շահութահարկը, նվազեցվում է ընդհանուր կապիտալից՝ որպես հետգնված բաժնետոմսեր, մինչև դրանց չեղյալ հայտարարումը կամ վերաթողարկումը: Երբ նման բաժնետոմսերը հետագայում վաճառվում կամ վերաթողարկվում են, ստացված փոխհատուցումը ներառվում է սեփական կապիտալում: Հետգնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված գնով:

*Շահաբաժիններ*

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

### Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվներ

Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվները չեն արտացոլվում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ չեն հանդիսանում Խմբի ակտիվներ:

### Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

### Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Խումբ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը.

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Եկամուտների և ծախսերի ճանաչումը (շարունակություն)

*Տոկոսային և համանման եկամուտ և ծախս*

2018 թվականի հունվարի 1-ից Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների (մինչև 2018 թ.հունվարի 1-ը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ): Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Խումբը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

Ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Խումբը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ՝ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտներում» օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

*Միջնորդավճարների գծով եկամուտ*

Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից Խումբը ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

*Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից,*

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

*Միջնորդավճարների գծով եկամուտ՝ միջնորդային ծառայությունների գծով*

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի կատարողական պարտավորությունների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո: Երբ պայմանագրով նախատեսված է փոփոխական փոխհատուցում, միջնորդավճարների գծով եկամուտը ճանաչվում է միայն այն չափով, որքանով որ հավանական է, որ ճանաչված կուտակային եկամտի զգալի մասի հակադարձում տեղի չի ունենա, մինչև հետագայում լուծվի փոփոխական փոխհատուցման հետ կապված անորոշությունը:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի վճարման ընդունման իրավունքը սահմանվում է:

### Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Խմբի գործառնական ու հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի օրվա միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժութային գործառնություններից օգուտներ/(վնասներ)՝ արտարժույթի վերագնահատում» հոդվածում: Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2018 և 2017 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հայտարարված փոխարժեքը կազմում էր 1 ԱՄՆ դոլարի համար 483.75 և 1 Եվրոյի համար 553 ՀՀ դրամ համապատասխանաբար:

### Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

*ՖՀՄՍ 16 Վարձակալություն*

2016թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16-ը, որը փոխարինում է ՀՀՄՍ 17-ին *«Վարձակալություն»,* ՖՀՄՄԿ 4-ին *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»,* ՄՄԿ 15-ին *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ 27-ին *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատում»:* ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալից հաշվառել բոլոր վարձակալությամբ ստացած ակտիվները միասնական հաշվապահական հաշվեկշռի մոդելով, ՀՀՄՍ 17-ի ֆինանսական վարձակալության հաշվառման նմանությամբ: Ստանդարտը նախատեսում է երկու տեսակի բացառություն վարձակալի համար՝ ցածրարժեք ակտիվների (օր.՝ անձնական համակարգիչներ) և կարճաժամկետ (12 ամսից պակաս ժամկետով) վարձակալության պարագայում: Վարձակալության սկսվելու օրվանից վարձակալը պետք է ճանաչի պարտավորություն վարձավճարների գծով (վարձակալական պարտավորություն) և ակտիվ, որը ներկայացնում է վարձակալված ակտիվի օգտագործման իրավունքը վարձակալության ողջ ընթացքում (օր.՝ ակտիվի օգտագործման իրավունք): Վարձակալը պետք է առանձին ճանաչի վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախսը և ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության ծախսը:

Վարձակալական պարտավորության չափը պետք է վերանայվի որոշակի իրադարձությունների ի հայտ գալու պարագայում (օր.՝ վարձակալության ժամանակահատվածի փոփոխություն, ապագա վարձավճարների փոփոխություն՝ կապված վարձավճարի չափի որոշման համար օգտագործվող ինդեքսի կամ դրույքի փոփոխության հետ): Վարձակալը հիմնականում կճանաչի վարձակալական պարտավորության վերաչափման գումարը՝ որպես ակտիվի օգտագործման իրավունքի ճշգրտում:

ՖՀՄՍ 16-ով վարձատուների կողմից հաշվառումը զգալիորեն չի փոխվել ներկայիս ՀՀՄՍ 17-ի համեմատ: Վարձատուները կշարունակեն դասակարգել բոլոր վարձակալությունները՝ օգտագործելով ՀՀՄՍ 17-ի դասակարգման սկզբունքները, և առանձնացնել վարձակալության երկու տեսակ՝ գործառնական և ֆինանսական վարձակալություններ:

ՖՀՄՍ 16-ը գործում է 2019թ. սկսվող կամ հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար և պահանջում է վարձակալներին և վարձատուներին կատարել ավելի ընդարձակ բացահայտումներ, քան ՀՀՄՍ 17-ի դեպքում:

Խումբը նախատեսում է ՖՀՄՍ 16-ին անցումը իրականացնել հետընթաց մոտեցմամբ `նախնական կիրառման ամսաթվին ճանաչված ՖՀՄՍ 16-ի կիրառման կուտակային ազդեցությամբ: Խումբը նախընտրում է կիրառել ստանդարտը այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում նույնականացվել են որպես վարձակալություն կիրառելով ՀՀՄՍ 17-ը և ՖՀՄՄԿ 4-ը: Այնուամենայնիվ, Խումբը չի կիրառի ստանդարտը այն պայմանագրերի նկատմամբ ,որոնք նախկինում չեն սահմանվել որպես ՀՀՄՍ 17-ով և ՖՀՄՄԿ 4-ով կիրառվող վարձակալություն:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Խումբը կորոշի օգտագործել ստանդարտով առաջարկվող բացառությունները վարձակալական պայմանագրերի գծով, որոնց համար վարձակալության ժամկետը վերջանում է սկզբնական կիրառման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, և վարձակալական պայմանագրերի գծով, որոնց հետ կապված ակտիվը ցածրարժեք է: Խումբն ունի որոշակի գրասենյակային սարքավորումների վարձակալություն (օրինակ՝ անհատական համակարգիչներ, տպագրության և պատճենահանման մեքենաներ), որոնք համարվում են ցածրարժեք:

ՖՀՄՍ 16-ի կիրառման՝ նախնական գնահատված ազդեցությունը Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա հետևյալն է.

| | *1 հունվարի 2019 թ. հազ. դրամ* |
|---|---|
| **Ակտիվներ** | |
| Հիմնական միջոցներ (օգտագործման իրավունքով ակտիվներ) | 2,346,720 |
| Այլ ակտիվներ (կանխավճարներ) | – |
| **Ընդամենը ակտիվներ** | **2,346,720** |
| **Պարտավորություններ** | |
| Այլ պարտավորություններ (վարձակալական պարտավորություն) | 2,346,720 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **2,346,720** |
| **Զուտ ազդեցությունը կապիտալի վրա** | **–** |

*ՖՀՄՄԿ մեկնաբանություն 23՝ «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»*

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տոկոսների և տույժերի վերաբերյալ: Մեկնաբանությունը, մասնավորապես, վերաբերում է հետևյալին՝

- արդյոք կազմակերպությունը առանձին է հաշվի առնում անորոշ հարկային մեկնաբանությունները,
- կազմակերպության ենթադրությունները՝ կապված հարկային մարմինների կողմից հարկման մոտեցումների մեկնաբանությունների ստուգման հետ,
- ինչպես է կազմակերպությունը սահմանում հարկվող շահույթը (հարկային վնասը), հարկման բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային գերավճարները և հարկային դրույքաչափերը,
- ինչպես է կազմակերպությունը հաշվի առնում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մոտեցում պետք է դիտարկել առանձին, թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մոտեցումների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը: Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2019 թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Խումբը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մտնելու օրվանից: Քանի որ Խումբը գործում է բարդ հարկային միջավայրում, մեկնաբանության կիրառումը կարող է ազդել նրա ֆինանսական հաշվետվությունների վրա: Բացի այդ, Խմբին կարող է անհրաժեշտ լինել մշակել գործընթացներ և ընթացակարգեր տեղեկատվություն ստանալու համար, որն անհրաժեշտ է մեկնաբանությունը ժամանակին կիրառելու համար:

*Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում՝ Կանխավճարի հատկանիշներ բացասական փոխհատուցմամբ*

ՖՀՄՍ 9-ի համաձայն, պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, պայմանով, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բացառապես մայր գումարի և չմարված գումարի վրա հաշվեգրված տոկոսագումարների վճարումներն են (SPPI չափանիշը), և գործիքը պահվում է տվյալ դասակարգման համար համապատասխան բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ ֆինանսական ակտիվը անցնում է SPPI չափանիշով, անկախ իրադարձությունից կամ հանգամանքից, որը հանգեցնում է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման, և անկախ նրանից, թե որ կողմն է վճարում կամ ստանում ողջամիտ փոխհատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

### Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019 թ. հունվարի 1-ից և պետք է կիրառվեն հետընթաց մոտեցմամբ, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Փոփոխությունները ազդեցություն չունեն Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Տարեկան բարեփոխումներ 2015-2017 շրջան (թողարկված 2017 թվականի դեկտեմբերին)***

Այս բարեփոխումները ներառում են՝

*ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»*

Փոփոխությունները հստակեցնում են, որ երբ կազմակերպությունը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, այն կիրառվում է փուլերով ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության միավորման պահանջները, ներառյալ համատեղ գործունեության ակտիվներում և պարտավորություններում նախկինում ունեցած մասնակցության վերաչափումը իրական արժեքով: Այդպիսով, ձեռք բերողը վերաչափում է համատեղ գործունեությունում նախկինում ունեցած ամբողջ մասնակցությունը:

Կազմակերպությունը փոփոխությունները կիրառում է այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների համար, որոնց դեպքում ձեռք բերումը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Այս փոփոխությունները կկիրառվեն Խմբի հետագա ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ:

*ՖՀՄՍ 11 «Համատեղ պայմանավորվածություններ»*

Մասնակցող կողմերից մեկը, որը սակայն համատեղ վերահսկողություն չունի համատեղ գործունեության նկատմամբ, կարող է վերահսկողություն ստանալ համատեղ գործունեության նկատմամբ, որտեղ համատեղ գործունեությունը սահմանվում է որպես ձեռնարկատիրական գործունեություն համաձայն ՖՀՄՍ 3-ի: Փոփոխությունները հստակեցնում են, որ համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցությունը չի վերաչափվում:

Կազմակերպությունը փոփոխությունները կիրառում է այն գործարքների համար, որոնց դեպքում համատեղ վերահսկողությունը ստանում է 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Այս փոփոխությունները ներկայումս կիրառելի չեն Խմբի համար, սակայն կարող են կիրառվել հետագա գործարքների դեպքում:

*ՀՀՄՍ 12 «Շահութահարկ»*

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ շահութահարկի գծով շահաբաժինների հետևանքները ուղղակիորեն կապված են բաշխման ենթակա շահույթ սկզբնավորող գործարքների կամ իրադարձությունների, և ոչ թե սեփականատերերին բաշխված շահույթի հետ : Հետևաբար, կազմակերպությունը շահութահարկի գծով շահաբաժինների բոլոր հետևանքները ճանաչում է շահույթում կամ վնասում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալում, կախված այն հանգամանքից, թե որտեղ են ի սկզբանե ճանաչվել տվյալ գործարքները կամ իրադարձությունները:

Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները 2019 թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Երբ Կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այս փոփոխությունները, դրանք կիրառում է այն շահաբաժինների շահութահարկային հետևանքների նկատմամբ, որը ճանաչել է ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Քանի որ Խմբի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, Խումբը չի ակնկալում էական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ»*

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ Կազմակերպությունը ընդհանուր փոխառությունների մեջ է ներառում այն փոխառությունը, որն ի սկզբանե ձեռք է բերվել որակավորվող ակտիվը զարգացնելու նպատակով, երբ ակտիվը օգտագործման կամ վաճառքի համար պատրաստելու աշխատանքները մեծ մասամբ ավարտված են:

Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունները այն փոխառության ծախսումների նկատմամբ, որոնք կրել է տվյալ տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, որի ընթացքում Կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այդ փոփոխությունները: Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները 2019 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Քանի որ Խմբի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, Խումբը չի ակնկալում էական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

*(հազար ՀՀ դրամ)*

## 4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

### Գնահատումների անորոշություն

Խմբի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված գումարների վերաբերյալ ղեկավարությունը կատարել է հետևյալ առավել կարևոր գնահատումները և դատողությունները.

*Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում*

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Խումբը ներգրավում է անկախ փորձագետների իր գույքերը գնահատելու համար:

*Ֆինանսական գործիքների իրական արժեքը*

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 29-ում:

*Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստ*

Եվ՝ ՖՀՄՍ 9-ի, և՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, հատկապես ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի գնահատումը և գրավի արժեքները՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ:

ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման պահուստի գումարը կազմել է 7,639,072 հազար դրամ (2017: 16,254,649 հազ. դրամ): Մանրամասները ներկայացված են 10-րդ և 11-րդ ծանոթագրություններում.

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում գնահատման անորոշության էական բնագավառների և կարևոր դատողությունների մասին տեղեկատվությունը նկարագրված է հետևյալ ծանոթագրություններում. Ծանոթագրություն 10՝ «Հաճախորդներին տրված վարկեր» , Ծանոթագրություն 11՝ «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», Ծանոթագրություն 28՝ «Ռիսկերի կառավարում» և Ծանոթագրություն 29՝ «Իրական արժեքի չափում»:

*(հազար ՀՀ դրամ)*

## 5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Խումբը բաժանվում է հետևյալ չորս սեգմենտների.

| | |
|---|---|
| Մանրածախ բանկային գործունեություն | Ֆիզիկական անձանց ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում և դրամական փոխանցումներ: |
| Կորպորատիվ բանկային գործունեություն | Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում: |
| Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն | Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ: |
| Ֆինանսական վարձակալություն | Կորպորատիվ և անհատ հաճախորդներին ֆինանսական վարձակալության գծով ծառայությունների մատուցում: |

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Սեգմենտի գործունեությունը, ինչպես նկարագրված է ստորև բերված աղյուսակում, չափվում է այլ կերպ, քան համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված շահույթը կամ վնասը: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

Գործառնական սեգմենտների միջև տրանսֆերային գնագոյացումը, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում, համապատասխանում է շուկայական պայմաններին:

2018 և 2017թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Խմբի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Խմբի գործառնական սեգմենտների գծով եկամտի և շահույթի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

| *2018 թ.* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն* | *Ֆինանսական վարձակալություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 21,290,000 | 7,432,358 | 1,737,931 | 92,455 | **30,552,744** |
| Այլ տոկոսային եկամուտ | – | – | – | 1,393,230 | **1,393,230** |
| Տոկոսային ծախս | (6,119,340) | (2,184,080) | (5,354,684) | (518,448) | **(14,176,552)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **15,170,660** | **5,248,278** | **(3,616,753)** | **967,237** | **17,769,422** |
| Վարկային կորուստների գծով ծախս | 29,453 | (322,103) | – | (2,509) | **(295,159)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո** | **15,200,113** | **4,926,175** | **(3,616,753)** | **964,728** | **17,474,263** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 1,718,913 | 2,021,825 | 195,400 | 210,134 | **4,146,272** |
| Միջնորդավճարների գծով ծախս | (1,218,390) | (346,961) | (165,325) | 573 | **(1,730,103)** |
| Զուտ եկամուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | – | – | 1,931,600 | – | **1,931,600** |
| Զուտ օգուտ վաճառված վարկերի գծով | – | 993,553 | – | – | **993,553** |
| Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | – | – | 126,601 | (10,806) | **115,795** |
| Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս | – | – | 223,631 | – | **223,631** |
| Այլ եկամուտ | 1,325,010 | 508,170 | 4,297 | 34,747 | **1,872,224** |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | **1,825,533** | **3,176,587** | **2,316,204** | **234,648** | **7,552,972** |
| Անձնակազմի գծով ծախսեր | (6,687,206) | (1,910,630) | (955,315) | (272,107) | **(9,825,258)** |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (731,680) | (209,054) | (104,526) | (23,530) | **(1,068,790)** |
| Այլ գործառնական ծախսեր | (448,765) | (924,640) | (267,990) | (75,610) | **(1,717,005)** |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (2,866,168) | (816,194) | (388,914) | (62,561) | **(4,133,837)** |
| Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր | (136,005) | (73,234) | – | – | **(209,239)** |
| **Ոչ տոկոսային ծախս** | **(10,869,824)** | **(3,933,752)** | **(1,716,745)** | **(433,808)** | **(16,954,129)** |
| **Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ** | **6,155,822** | **4,169,010** | **(3,017,294)** | **765,568** | **8,073,106** |
| Շահութահարկի գծով ծախս | (1,392,052) | (942,762) | 682,318 | (173,122) | **(1,825,618)** |
| **Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)** | **4,763,770** | **3,226,248** | **(2,334,976)** | **592,446** | **6,247,488** |
| Տոկոսակիր ֆինանսական ակտիվներ | 147,993,460 | 73,276,525 | 32,741,784 | 15,257,457 | **269,269,226** |
| Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ | 151,067,949 | 59,482,377 | 65,906,069 | 12,138,592 | **288,594,987** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

| *2017 թ.* | *Մանրածախ բանկային գործունեություն* | *Կորպորատիվ բանկային գործունեություն* | *Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն* | *Ֆինանսական վարձակալություն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 21,783,388 | 6,255,280 | 2,822,599 | 1,204,368 | **32,065,635** |
| Տոկոսային ծախս | (5,517,838) | (1,962,612) | (6,812,575) | (553,409) | **(14,846,434)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **16,265,550** | **4,292,668** | **(3,989,976)** | **650,959** | **17,219,201** |
| Վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստի ձևավորման գծով ծախս | (2,593,676) | 292,082 | – | (235,978) | **(2,537,572)** |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստից հետո** | **13,671,874** | **4,584,750** | **(3,989,976)** | **414,981** | **14,681,629** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 1,918,395 | 1,036,114 | 650,881 | 251,039 | **3,856,429** |
| Միջնորդավճարների գծով ծախս | (1,432,026) | (18,511) | 54,510 | (46,290) | **(1,442,317)** |
| Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | – | – | (451,323) | – | **(451,323)** |
| Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | 381,802 | 194,827 | 1,530,228 | (14,149) | **2,092,708** |
| Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս | – | – | 96,282 | – | **96,282** |
| Այլ եկամուտ | 2,529,544 | 363,993 | 25,504 | 66,223 | **2,985,264** |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | **3,397,715** | **1,576,423** | **1,906,082** | **256,823** | **7,137,043** |
| Անձնակազմի գծով ծախսեր | (5,819,611) | (1,662,746) | (831,372) | (253,000) | **(8,566,729)** |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (724,030) | (206,866) | (103,433) | (28,407) | **(1,062,736)** |
| Այլ գործառնական ծախսեր | (1,058,455) | (374,437) | (107,315) | (111,830) | **(1,652,037)** |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (2,240,188) | (646,392) | (293,160) | (67,001) | **(3,246,741)** |
| Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր | (58,687) | (43,252) | – | – | **(101,939)** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստ | (876,439) | (667,200) |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **4,177,102** | **2,682,598** |

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար այլ ֆինանսական ակտիվներ գծով ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալն է՝

| | *Փուլ 1* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ** | **7,792** | **7,792** |
| ԱՎԿ ծախս | 5,502 | 5,502 |
| **2018 թ. դեկտեմբերի 31** | **13,294** | **13,294** |

Այլ արժեզրկման և պահուստների գծով տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| **Հաշվետու տարվա սկզբի մնացորդ** | **667,200** | **544,232** |
| Զուտ ծախս | 209,239 | 101,939 |
| Զուտ վերականգնումներ | – | 21,029 |
| **Հաշվետու տարվա վերջի մնացորդ** | **876,439** | **667,200** |

## 16. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| **Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ** | | |
| Մանրածախ | 27,437,878 | 22,242,967 |
| Կորպորատիվ | 18,022,609 | 18,309,274 |
| **Ժամկետային ավանդներ** | | |
| Մանրածախ | 119,871,845 | 98,842,184 |
| Կորպորատիվ | 36,443,112 | 27,155,608 |
| **Ընդամենը** | **201,775,444** | **166,550,033** |
| Որպես ակրեդիտիվների գծով պահվող ապահովման միջոց | 49,829 | 76,000 |
| Որպես երաշխիքների գծով պահվող ապահովման միջոց | 1,080,496 | 298,807 |

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տասը խոշորագույն հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների մնացորդը կազմել է 29,309,800 հազ. դրամ (14.5%) (2017թ.՝ 23,467,847 հազ. դրամ (14.1%)):

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Խումբը պարտավորվում է հետ վճարել ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջի դեպքում: Այն դեպքում, երբ ժամկետային ավանդների գծով դրամական միջոցները հետ են վերադարձվում ավանդատուին մինչև ժամկետի ավարտը համաձայն ավանդատուի պահանջի, ավանդի տոկոսները վճարվում են ցպահանջ ավանդների տոկոսադրույքներին համապատասխան, եթե պայմանագրով այլ տոկոսադրույքներ նախատեսված չեն:

*(հազար ՀՀ դրամ)*

## 17. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը ներառում են հետևյալ հոդվածները

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Մուրհակներ | 3,463,462 | 4,939,151 |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | 5,567,619 | 2,971,160 |
| **Թողարկված պարտքային արժեթղթեր** | **9,031,081** | **7,910,311** |

Պարտքային արժեթղթերը ներառում են մուրհակներ՝ 3,463,463 հազ. դրամի չափով (2017թ.՝ 4,939,151 հազ. դրամ), որոնք թողարկվել են Խմբի կողմից ոչ ռեզիդենտ ֆոնդերին՝ ֆինանսավորման նպատակով:

2017թ. երրորդ եռամսյակում Խումբը ՀՀ-ում թողարկել է ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր՝ 5,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, մինչև 2020 թվականը մարման ժամկետով: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 2,470,198 հազ. դրամ:

2017թ. չորրորդ եռամսյակում Խումբը ազդագրի գրանցման հայտ է ներկայացրել ՀՀ կենտրոնական բանկ՝ դրամով արտահայտված 1,000,000 հազ. դրամ անվանական արժեքով պարտատոմսեր թողարկելու համար:

2017թ. դեկտեմբերի դրությամբ Խումբը տեղաբաշխել է նշված թողարկման 50%-ը, որոնց անվանական արժեքը կազմում է 500,000 հազ. դրամ, իսկ մարման ժամկետը՝ 2019թ.: 2017թ. դեկտեմբերի դրությամբ տեղաբաշխված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 500,962 հազ.դրամ:

Այս թողարկման մյուս 50%-ը տեղաբաշխվել է 2018 թ.-ին: 2018 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Խումբը նաև տեղաբաշխել է դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր՝ համապատասխանաբար 2,754,700 ԱՄՆ դոլար և 700,000 հազ. դրամ անվանական արժեքներով: Այս տեղաբաշխումների մարման ժամկետները, համապատասխանաբար, 2021 և 2020 թվականներն են:

2018թ. դեկտեմբերի դրությամբ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված տեղաբաշխված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է, համապատասխանաբար, 1,734,142 հազ. դրամ և 3,833,477 հազ. դրամ:

## 18. Այլ փոխառություններ

Այլ փոխառությունները ներառում են հետևյալ հոդվածները

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Միջազգային ֆինանսական կազմակերպություններից փոխառու միջոցներ | 40,099,489 | 38,813,382 |
| ՀՀ Կառավարությունից փոխառու միջոցներ | 27,345,218 | 27,509,356 |
| Տեղական ֆինանսական կազմակերպություններից փոխառու միջոցներ | 1,125,007 | 1,223,480 |
| **Այլ փոխառություններ** | **68,569,714** | **67,546,218** |

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 29,000,308 հազ. դրամ (2017թ.՝ 29,362,921 հազ. դրամ) համախառն արժեքով հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ հանդիսանում են որպես գրավ ՀՀ Կառավարությունից և հայկական ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ապահովված փոխառությունների համար (տե՛ս Ծանոթագրություններ 10 և 11):

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ունի չորս վարկատուներ (2017թ.՝ երեք), որոնցից ներգրավված այլ փոխառությունների մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը: Այդ մնացորդների համախառն արժեքը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 48,390,488 հազ. դրամ (2017թ.՝ 41,308,449 հազ. դրամ):

### Պարտադիր պայմանների խախտում

2018 և 2017 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը խախտել է ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերով նախատեսված որոշ պարտադիր պայմաններ: Համապատասխանաբար, միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված 3,890,739 հազ. դրամ գումարի չափով փոխառությունները (2017թ.՝ 6,320,300 հազ. դրամ) դասակարգվել են «մեկ տարվա ընթացքում» կատեգորիայում՝ Ծանոթագրություն 32-ի մարման ժամկետների վերլուծությունում և «մինչև 3 ամիս» կատեգորիայում՝ Ծանոթագրություն 28-ի իրացվելիության վերլուծությունում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 19. Այլ պարտավորություններ

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր | 2,053,585 | 2,857,344 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատակազմի նկատմամբ | 1,687,920 | 1,311,273 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **3,741,505** | **4,168,617** |
| Կանխավճարներ | 955,228 | 458,539 |
| Շահութահարկից բացի այլ հարկային պարտավորություններ | 183,790 | 570,668 |
| Պարտքեր ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին | 76,062 | 63,406 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **1,215,080** | **1,092,613** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **4,956,585** | **5,261,230** |

## 20. Կապիտալ

### Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 2,500 սովորական բաժնետոմսերից (2017թ.` 2,500 սովորական բաժնետոմսեր), որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 12,000 հազ. դրամ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում` մեկ բաժնետոմս` մեկ ձայն սկզբունքով:

### Պահուստների բնույթը և նպատակը

*Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատումից աճ*

Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատումից աճը ներառում է մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը դրանց կուտակային դրական վերագնահատված արժեքը:

### Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը` մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

### Շահաբաժիններ

2018 թ. ապրիլին Բանկի բաժնետերերի ժողովում Բանկը հայտարարել է շահաբաժիններ 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ընդհանուր 3,750,000 հազ.դրամ արժեքով (մեկ բաժնետոմսի համար` 1,500 հազ. դրամ): Շահաբաժինները վճարվել են 2018 թվականին:

## 21. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

### Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը` շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը գտնում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ ներկայիս իրավիճակում Խմբի գործունեության կայունությունը ապահովելու համար:

### Իրավական միջավայր

Իր բնականոն գործունեության ընթացքում Խումբը հանդիսանում է դատական հայցերի և պահանջների առարկա: Ղեկավարության համոզմամբ նման հայցերի և պահանջների արդյունքում ծագող հնարավոր պարտավորությունները (առկայության դեպքում) էական բացասական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության արդյունքների վրա:

*(հազար ՀՀ դրամ)*

## 21. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

### Հարկային միջավայր

ՀՀ հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ են հաճախակի փոփոխությունները օրենսդրությունում, պաշտոնական հայտարարություններում և դատական որոշումներում, որոնք հաճախ ոչ հստակ և հակասական են և ենթակա տարընթերցումների տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և տոկոսային վճարներ: Հարկային օրենսդրությունը խախտելու դեպքում, լրացուցիչ հարկային պարտավորություններ, տույժեր և տուգանքներ չեն կարող կիրառվել հարկային մարմինների կողմից, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները ՀՀ-ում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի էական են, քան այլ երկրներում: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է ճանաչել հարկային պարտավորությունները՝ հիմնված ՀՀ հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների վրա: Սակայն համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական վիճակի վրա ազդեցությունը կարող է էական լինել, եթե տվյալ մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները:

### Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| **Վարկային բնույթի պարտավորություններ** | | |
| Վարկային գծեր | 7,090,738 | 5,992,255 |
| Վարկային քարտեր | 13,596,857 | 14,738,252 |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | 4,802,311 | 4,334,170 |
| Արժեզրկման գծով պահուստ | (84,574) | – |
| | **25,405,332** | **25,064,677** |
| **Գործառնական վարձակալության գծով պարտավորություններ** | | |
| Մինչև 1 տարի | 426 | 980 |
| 1-ից մինչև 5 տարի | 106,782 | 328,373 |
| 5 տարուց ավել | 193,694 | 342,102 |
| | **300,902** | **671,455** |
| **Պայմանագրային և պայմանական պարտավորություններ (մինչև գրավով նվազեցում)** | **25,706,234** | **25,736,132** |
| Հանած՝ ակրեդիտիվների գծով ապահովման միջոց հանդիսացող ավանդները (Ծան. 16) | (49,829) | (76,000) |
| **Պայմանագրային և պայմանական պարտավորություններ** | **25,656,405** | **25,660,132** |

2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| *Վարկային գծերի և վարկային քարտերի մասով ստանձնած պարտավորություններ* | *Փուլ 1* | *Փուլ 2* | *Փուլ 3* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ** | **85,848** | **607** | **1,924** | **88,379** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 20,090 | – | – | **20,090** |
| Ժամկետի սպառում | (21,754) | (442) | (1,309) | **(23,505)** |
| Տեղափոխում Փուլ 1 | 94 | (94) | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 2 | (361) | 361 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | (1,115) | (34) | 1,149 | **–** |
| Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա | (64) | 404 | 3,778 | **4,118** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (5,166) | 40 | 66 | **(5,060)** |
| Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ | (729) | (4) | (44) | **(777)** |
| **2018 թ. դեկտեմբերի 31-ին** | **76,843** | **838** | **5,564** | **83,245** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 21. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ (շարունակություն)

### Պայմանագրային և պայմանական պարտավորություններ (շարունակություն)

| *Երաշխիքներ և ակրեդիտիվներ* | *Փուլ 1* | *Ընդամենը* |
|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ** | **1,435** | **1,435** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 1,315 | **1,315** |
| Մարված ակտիվներ | (1,421) | **(1,421)** |
| **2018 թ. դեկտեմբերի 31-ին** | **1,329** | **1,329** |

## 22. Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է.

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր | 28,516,902 | 27,894,928 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 448,804 | 627,795 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 161,684 | 945,035 |
| Այլ | 227,615 | 100,813 |
| | **29,355,005** | **29,568,571** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Պարտքային գործիքներ | 1,197,739 | 1,385,478 |
| **Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով** | **30,552,744** | **30,954,049** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 1,393,230 | 1,111,586 |
| **Այլ տոկոսային եկամուտ** | **1,393,230** | **1,111,586** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **31,945,974** | **32,065,635** |
| **Տոկոսային ծախս** | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 7,971,834 | 7,383,558 |
| Այլ փոխառություններ | 5,199,779 | 6,469,427 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 272,090 | 875,308 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 34,505 | 2,962 |
| Այլ | 698,344 | 115,179 |
| | **14,176,552** | **14,846,434** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **17,769,422** | **17,219,201** |

## 23. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամուտը ներառում է հետևյալ հոդվածները.

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Պլաստիկ քարտերի սպասարկում | 2,330,388 | 2,055,195 |
| Դրամական փոխանցումներ | 585,030 | 669,802 |
| Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում | 256,824 | 74,564 |
| Կանխիկացման ծառայություններ | 160,670 | 165,286 |
| Բանկային հաշիվների սպասարկման վճարներ | 117,745 | 564,444 |
| Այլ | 695,615 | 327,138 |
| **Միջնորդավճարների գծով եկամուտ** | **4,146,272** | **3,856,429** |
| Պլաստիկ քարտերի սպասարկում | 1,514,096 | 1,191,250 |
| Դրամական փոխանցումներ | 73,065 | 74,705 |
| Այլ | 142,942 | 176,362 |
| **Միջնորդավճարների գծով ծախս** | **1,730,103** | **1,442,317** |
| **Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ** | **2,416,169** | **2,414,112** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 24. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Զուտ օգուտ արտարժույթի առք ու վաճառքից | 1,406,051 | 1,422,277 |
| Զուտ (վնաս)/օգուտ արտարժույթի վերագնահատումից | (1,290,256) | 670,431 |
| | 115,795 | 2,092,708 |

## 25. Այլ եկամուտ

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Ստացված տույժեր և տուգանքներ | 1,690,514 | 2,762,018 |
| Այլ | 181,710 | 223,246 |
| **Ընդամենը այլ եկամուտ** | 1,872,224 | 2,985,264 |

## 26. Այլ գործառնական ծախսեր

Այլ գործառնական ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Վարկերի հավաքագրման գծով ծախսեր | 350,328 | 349,776 |
| Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին | 288,791 | 221,900 |
| Հողի և շենքերի վերագնահատումից կորուստներ | 245,414 | 57,772 |
| Քեշբեքերի և վարկային քարտերի բոնուսների գծով ծախսեր | 185,146 | 134,361 |
| Շահութահարկից բացի այլ հարկեր | 127,083 | 253,541 |
| Ինկասացիոն ծախսեր | 141,523 | 123,284 |
| Այլ ակտիվների օտարումից վնաս | 38,700 | 171,795 |
| Վճարված տույժեր և տուգանքներ | 23,798 | 4,458 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 17,647 | 139,145 |
| Ֆինանսական համակարգի հաշտարարի գծով ծախսեր | – | 27,436 |
| Այլ | 298,575 | 168,569 |
| **Այլ գործառնական ծախսեր** | 1,717,005 | 1,652,037 |

## 27. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| Հիմնական միջոցների նորոգում և տեխնիկական սպասարկում | 1,099,354 | 636,445 |
| Գործառնական վարձակալության գծով ծախս | 693,139 | 695,883 |
| Անվտանգություն | 358,120 | 342,740 |
| Գովազդ և մարքետինգ | 336,351 | 413,727 |
| Ապահովագրություն | 324,641 | 200,063 |
| Կապ | 267,692 | 244,990 |
| Կոմունալ ծառայություններ և գրասենյակային պարագաներ | 262,254 | 161,359 |
| Ներկայացուցչական ծախսեր | 73,186 | 99,107 |
| Բարեգործություն | – | 60,513 |
| Այլ | 719,100 | 391,914 |
| **Այլ ընդհանուր վարչական ծախսեր** | 4,133,837 | 3,246,741 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում

### Ներածություն

Ռիսկերը բնորոշ են Խմբի գործունեությանը և կառավարվում են մշտական հայտնաբերման, չափման և մոնիթորինգի գործընթացների միջոցով, որոնք ենթակա են ռիսկերի սահմանաչափերին և մշտական վերահսկողության: Ռիսկերի կառավարման գործընթացը ունի որոշիչ նշանակություն Խմբի եկամտաբերության հաստատուն մակարդակի պահպանման հարցում, և Խմբի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների շրջանակում ի հայտ եկող ռիսկերի համար: Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Խումբը, վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերն են: Վերջինս իր հերթին բաժանվում է արտարժութային և տոկոսադրույքի ռիսկերի: Խումբը ենթակա է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման գործառույթը ծածկում է նաև այնպիսի բիզնես ռիսկեր, ինչպիսիք են շրջակա միջավայրում, տեխնոլոգիաներում և տնտեսության ճյուղերում փոփոխությունները` դրանց հետ առնչություն ունեցող տարբեր ստորաբաժանումների ներգրավման միջոցով:

*Ռիսկերի կառավարման համակարգ*

Ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը, սակայն առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

*Բանկի խորհուրդը*

Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

*Գլխավոր գործադիր տնօրեն*

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու է Խմբում ռիսկերի գործընթացի կառավարման և վերահսկման համար:

*Ռիսկերի կառավարման հանձնաժողով*

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը ընդհանուր առումով պատասխանատու է ռիսկերի կառավարման ռազմավարության և դրա իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականությունների և սահմանաչափերի մշակման համար: Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

*Ռիսկերի կառավարման ստորաբաժանում*

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն:

*Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժին*

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Խմբի ակտիվների և պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև պատասխանատու է Խմբի ֆինանսավորման և իրացվելիության ռիսկերի համար:

*Ներքին աուդիտ*

Խմբի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի հանձնաժողովին:

*Ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգեր*

Տարբեր ռիսկերի վերլուծության և գնահատման ժամանակ Խումբն ընդունում է անհատական մոտեցում` կիրառելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ, ինչպես նաև վերլուծելով տարբեր ռիսկային ցուցանիշների դինամիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով համապատասխան միջոցներ: Մոդելները հետագայում փորձարկվում են վավերականության ստուգման նպատակով: Խումբը նաև կիրառում է վատագույն դեպքի սցենարներ, որոնք կառաջանան այն դեպքում, երբ ծայրահեղ դեպքերը, որոնք քիչ հավանական է, որ տեղի կունենան, փաստացի տեղի են ունենում:

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Ներածություն (շարունակություն)

Ռիսկերի դիտարկումը և վերահսկումը հիմնականում իրականացվում է Խմբի կողմից հաստատված սահմանաչափերի հիման վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Խմբի գործարար ռազմավարությունը և շուկայական միջավայրը, ինչպես նաև այն ռիսկի մակարդակը, որը Խումբը պատրաստ է ընդունել` լրացուցիչ շեշտադրելով տնտեսության ընտրված ոլորտները: Բացի այդ, Խումբը դիտարկում և գնահատում է ընդհանուր ռիսկին ենթարկվելու առավելագույն մակարդակը բոլոր տեսակի ռիսկերի և գործունեությունների գծով:

Բոլոր բիզնես ուղղություններին վերաբերող վարկային ռիսկի մասին տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերը վերլուծելու,վերահսկելու և վաղ հայտնաբերելու համար: Այս տեղեկատվությունը ներկայացվում և բացատրվում է Գլխավոր գործադիր տնօրենին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և բոլոր բիզնես ստորաբաժանումների ղեկավարներին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացված հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկին ենթարկվածության վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի դիտարկման արդյունքները, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և ռիսկերի պրոֆիլի փոփոխությունները: Եռամսյակային կտրվածքով մանրամասն հաշվետվություն է ներկայացվում հաճախորդների, տնտեսության և բիզնես ուղղությունների ռիսկերի վերաբերյալ: Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը` ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Բանկի խորհուրդը եռամսյակը մեկ ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, ինչը ներառում է անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն Խմբի ընդհանուր ռիսկերը գնահատելու և դրանց մասին եզրակացություն կազմելու համար:

Խմբի բոլոր մակարդակների համար հատուկ հարմարեցված ռիսկերի հաշվետվություններ են պատրաստվում և ներկայացվում, որպեսզի բոլոր բիզնես ստորաբաժանումները ապահովված լինեն լիարժեք, անհրաժեշտ և արդի տեղեկատվությամբ:

Ռիսկերի սահմանաչափերի խախտման դեպքում օրական ահազանգներ են ուղարկվում Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև Գլխավոր գործադիր տնօրենին, և քննարկվում ու կիրառվում են համապատասխան միջոցներ:

*Ռիսկերի նվազեցում*

Որպես ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի մաս, Խումբը կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ` կառավարելու համար տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող ռիսկը, կապիտալի և վարկային ռիսկերը, ինչպես նաև կանխատեսվող գործարքներից առաջացող ռիսկերը:

Խումբը լայնորեն օգտագործում է գրավ` վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով:

*Ռիսկերի գերկենտրոնացում*

Ռիսկի համակենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործոնների ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը նմանապես է արձագանքում տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների համեմատական զգայունությունն այն պայմանների նկատմամբ, որոնք ազդում են որոշակի ոլորտի կամ աշխարհագրական տարածաշրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով Խմբի քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրահատուկ սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով բազմազանեցված պորտֆել ապահովելուն: Իրականացվում է սահմանված համակենտրոնացման կառավարում:

### Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Խումբը կարող է կրել վնասներ` հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում` սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

*(հազար ՀՀ դրամ)*

# 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

## Վարկային ռիսկ (շարունակություն)

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Գործընկերների սահմանաչափերը հաստատված են վարկային ռիսկերի դասակարգման համակարգի միջոցով, որը յուրաքանչյուր գործընկերոջ համար սահմանում է ռիսկի վարկանիշ: Ռիսկերի վարկանիշները ենթակա են պարբերաբար վերանայման: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

*Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

*Վարկային բնույթ ունեցող պարտավորությունների հետ կապված ռիսկեր*

Խումբը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները նման վճարումները հատուցում են Խմբին՝ ակրեդիտիվների տրամադրման պայմաններին համապատասխան: Նշված պայմանագրերի համաձայն՝ Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 10-ում և 11-ում:

*Արժեզրկման գնահատում*

2018 թ. հունվարի 1-ից Խումբը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

| | |
|---|---|
| PD | *<u>Դեֆոլտի հավանականությունը</u>* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է: |
| EAD | *<u>Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը</u>* դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն: |
| LGD | *<u>Դեֆոլտի դեպքում կորստի չափը</u>* դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս: |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

ԱԿԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱԿԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱԿԿ): 12ամԱԿԿ-ը ԱԿԱԿԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱԿԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱԿԿ-ն, այնպես էլ 12ամԱԿԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում ՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

| | |
|---|---|
| Փուլ 1: | Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱԿԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից: |
| Փուլ 2: | Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱԿԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից: |
| Փուլ 3: | Ակտիվը համարվում է արժեզրկված: Խումբը ձևակերպում է ԱԿԱԿԿ պահուստ: |
| POCI | Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱԿԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը: |

*Դեֆոլտի սահմանումը*

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱԿԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 91 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը: Խումբը բանկերին տրված վարկերը համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսները (արժեկտրոնները) և/կամ հիմնական գումարը ավելի քան 15 աշխատանքային օր:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը, վերանայման կարգավիճակը, ինչպես նաև ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է տարատեսակ դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին: Նման դեպքեր տեղի ունենալու պարագայում, Խումբը մանրամասն դիտարկում է, թե արդյոք տվյալ դեպքի արդյունքում հաճախորդը պետք է ճանաչվի անվճարունակ և դասակարգվի Փուլ 3-ում ՝ ԱԿԿ հաշվարկման նպատակով, թե համապատասխանում է Փուլ 2-ի կիրառմանը:

*(հազար ՀՀ դրամ)*

# 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

## Վարկային ռիսկ (շարունակություն)

***Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը***

*Գանձապետական և միջբանկային հարաբերություններ*

Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խումբը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

*Հաճախորդներին տրված վարկեր*

<u>Խմբավորում</u>

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ էական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, Խումբը հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Խումբն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- կորպորատիվ վարկեր,
- սպառողական վարկեր,
- գյուղատնտեսական վարկեր
- հիփոթեքային վարկեր
- այլ (վարկային քարտեր և ոսկով ապահովված վարկեր).

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոխոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության:

Հիմք ընդունելով մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատման շեղումները փաստացի միտումներից՝ մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները ուղղված են երեք դեֆոլտի հավանականության PIT մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝ լավագույն, բազային և վատագույն սցենարներին համապատասխան:

***Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը***

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը դեֆոլտին մոտենալու դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2 դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

***Դեֆոլտի ժամանակ կորստի չափը***

Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT- ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման ` ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո ` ըստ LGD խմբերի: ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակիցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով : Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

*Վարկային ռիսկի զգալի աճ*

Խումբն սահմանել է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր գնահատելու քաղաքականություն: Խումբն որպես հիմնական հայտանիշ է օգտագործում վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Խումբը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս Խմբի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- կանխորոշված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերի քանակը
- վարկառուի ֆինանսական պայմանների զգալի դժվարությունները
- վարկառուի ֆինանսական պայմանների վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումը
- վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքները

*Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ*

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՀՆԱ-ի տարեկան աճը
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ
- Ֆիսկալ / Բյուջեի դեֆիցիտը
- Ոսկու գինը, դոլար մեկ ունցիայի համար
- Սպառողական գնաճ
- Արտահանման ծավալներ
- Ներմուծման ծավալներ
- ԱՄՆ դոլարի/դրամի փոխարժեքը (ժամանակաշրջանի վերջում)
- Շինարարության տարեկան աճ

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

Կանխատեսվող տեղեկատվությունը Խումբը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից, Համաշխարհային Բանկի տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ կառավարության կանխատեսումներից): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխանաբար հետևյալ սցենարներից յուրաքանչյուրին. լավատեսական, բազիսային և վատատեսական սցենարներ: Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսականփոփոխականները / ենթադրությունները, ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվում ԱՎԿ-ն:

| *Հիմնական գործոնները* | *ԱՎԿ սցենարը* | *Որոշված հավանակա-նությունը, %* | *2019 թ.* | *2020 թ.* | *2021 թ.* |
|---|---|---|---|---|---|
| ՀՆԱ-ի տարեկան աճը, % | | | | | |
| | Լավատեսական | 15% | 7.57% | 7.82% | 7.95% |
| | Բազիսային | 70% | 5.30% | 5.50% | 5.60% |
| | Վատատեսական | 15% | 3.03% | 3.18% | 3.25% |
| Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, % | | | | | |
| | Լավատեսական | 15% | 11.19% | 10.46% | 10.40% |
| | Բազիսային | 70% | 5.7% | 5.9% | 6.4% |
| | Վատատեսական | 15% | 0.21% | 1.34% | 2.40% |
| Ֆիսկալ / բյուջեի դեֆիցիտ, հազ. դրամ | Լավատեսական | 15% | 44,372,198 | 34,705,242 | 54,097,179 |
| | Բազիսային | 70% | (150,648,600) | (165,233,300) | (149,482,200) |
| | Վատատեսական | 15% | (345,669,398) | (365,171,842) | (353,061,579) |
| Ոսկու գինը, դոլար մեկ ունցիայի համար | | | | | |
| | Լավատեսական | 15% | 1,381.30 | 1,472.56 | 1,551.06 |
| | Բազիսային | 70% | 1,245.00 | 1,231.00 | 1,217.00 |
| | Վատատեսական | 15% | 1,108.70 | 1,010.52 | 933.66 |
| Սպառողական գնաճ, % | | | | | |
| | Լավատեսական | 15% | 0.12% | 0.33% | 0.23% |
| | Բազիսային | 70% | 3.20% | 3.80% | 4.00% |
| | Վատատեսական | 15% | 6.28% | 7.27% | 7.77% |
| Արտահանման ծավալներ, հազ. դրամ | | | | | |
| | Լավատեսական | 15% | 1,542,894,110 | 2,058,612,664 | 2,743,362,546 |
| | Բազիսային | 70% | 1,364,827,522 | 1,614,025,826 | 1,908,234,351 |
| | Վատատեսական | 15% | 1,186,760,934 | 1,223,453,026 | 1,262,527,622 |
| Ներմուծման ծավալներ, հազ. դրամ | | | | | |
| | Լավատեսական | 15% | 3,152,694,198 | 4,094,915,953 | 5,366,968,511 |
| | Բազիսային | 70% | 2,774,876,592 | 3,135,563,826 | 3,549,933,940 |
| | Վատատեսական | 15% | 2,397,058,986 | 2,303,822,798 | 2,197,067,092 |
| ԱՄՆ դոլարի / դրամի փոխարժեք | | | | | |
| | Լավատեսական | 15% | 477.62 | 466.43 | 452.12 |
| | Բազիսային | 70% | 495.20 | 506.20 | 517.10 |
| | Վատատեսական | 15% | 512.78 | 547.57 | 587.95 |
| Շինարարության տարեկան աճ | | | | | |
| | Լավատեսական | 15% | 14.560% | 14.475% | 14.415% |
| | Բազիսային | 70% | 6.000% | 6.000% | 6.000% |
| | Վատատեսական | 15% | (2.560% | (2.475%) | (2.415%) |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

*Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն*

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 31 դեկտեմբերի 2018թ.-ի դրությամբ իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների ակտիվների դասի վարկային որակի մասին:

| | *Ծան.* | | *Բարձր դաս* | *Ստանդարտ դաս* | *Ստանդարտից ցածր դաս* | *Արժեզրկված* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով | 10 | | | | | | |
| - Կորպորատիվ վարկավորում | | Փուլ 1 | 70,784 | 59,262,145 | – | – | **59,332,929** |
| | | Փուլ 2 | – | – | 303,210 | – | **303,210** |
| | | Փուլ 3 | – | – | – | 1,171,904 | **1,171,904** |
| | | POCI | – | – | – | 7,021 | **7,021** |
| - Գյուղատնտեսական վարկեր | | Փուլ 1 | 47,431 | 57,553,729 | – | – | **57,601,160** |
| | | Փուլ 2 | – | – | 1,856,988 | – | **1,856,988** |
| | | Փուլ 3 | – | – | – | 1,256,715 | **1,256,715** |
| - Սպառողական վարկեր | | Փուլ 1 | 706,434 | 57,605,388 | – | – | **58,311,822** |
| | | Փուլ 2 | – | – | 596,269 | – | **596,269** |
| | | Փուլ 3 | – | – | – | 829,309 | **829,309** |
| - Վարկային քարտեր | | Փուլ 1 | 1,197,881 | 8,038,625 | – | – | **9,236,506** |
| | | Փուլ 2 | – | – | 96,774 | – | **96,774** |
| | | Փուլ 3 | – | – | – | 258,985 | **258,985** |
| - Հիփոթեքային վարկեր | | Փուլ 1 | – | 9,501,085 | – | – | **9,501,085** |
| | | Փուլ 2 | – | – | 39,316 | – | **39,316** |
| | | Փուլ 3 | – | – | – | 171,291 | **171,291** |
| | | POCI | – | – | – | 27,037 | **27,037** |
| - Ոսկու գրավադրմամբ վարկեր | | Փուլ 1 | – | 5,250,623 | – | – | **5,250,623** |
| | | Փուլ 2 | – | – | 73,095 | – | **73,095** |
| | | Փուլ 3 | – | – | – | 90,488 | **90,488** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 11 | Փուլ 1 | – | 15,067,140 | – | – | **15,067,140** |
| | | Փուլ 2 | – | – | 148,770 | – | **148,770** |
| | | Փուլ 3 | – | – | – | 41,547 | **41,547** |
| **Ընդամենը** | | | **2,022,530** | **212,278,735** | **3,114,422** | **3,854,297** | **221,269,984** |

Ստորև աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալությունների գծով ստացվելիք գումարների դեֆոլտի հավանականության միջին մեծությունները, ըստ դասերի՝

| | *Դաս* | *Միջին PD* |
|---|---|---|
| - Կորպորատիվ վարկավորում | Ստանդարտ | 0.98% |
| | Ստանդարտից ցածր | 9.19% |
| | Արժեզրկված | 100% |
| - Գյուղատնտեսական վարկեր | Ստանդարտ | 1.50% |
| | Ստանդարտից ցածր | 6.75% |
| | Արժեզրկված | 100% |
| - Սպառողական վարկեր | Ստանդարտ | 1.82% |
| | Ստանդարտից ցածր | 14.84% |
| | Արժեզրկված | 100% |
| - Վարկային քարտեր | Ստանդարտ | 2.18% |
| | Ստանդարտից ցածր | 18.22% |
| | Արժեզրկված | 100% |
| - Հիփոթեքային վարկեր | Ստանդարտ | 1.27% |
| | Ստանդարտից ցածր | 15.50% |
| | Արժեզրկված | 100% |
| - Ոսկու գրավադրմամբ վարկեր | Ստանդարտ | 0.78% |
| | Ստանդարտից ցածր | 2.13% |
| | Արժեզրկված | 100% |
| - Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | Ստանդարտ | 0.46% |
| | Ստանդարտից ցածր | 13.92% |
| | Արժեզրկված | 100% |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

Բարձր դասի գործիքները ներառում են դրամական միջոցներով ապահովված՝ հաճախորդներին տրամադրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ: Այս վարկերի գծով արժեզրկման պահուստ չի ձևավորվում՝ ելնելով գրավով ապահովվածությունից:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս համաձայն ՀՀՄՍ 39-ի 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զուտ մնացորդները՝ հիմք ընդունելով ներքին վարկային վարկանիշային համակարգը:

| | *Ոչ ժամկետանց և չարժեզրկված* | | | *Ժամկետանց, բայց ոչ անհատապես արժեզրկված* | | |
|---|---|---|---|---|---|---|
| *2017թ. դեկտեմբերի 31* | *Բարձր վարկանիշ* | *Ստանդարտ վարկանիշ* | *Ցածր վարկանիշ* | | *Անհատապես արժեզրկված* | *Ընդամենը* |
| Հաճախորդներին տրված զուտ վարկեր | | | | | | |
| - Կորպորատիվ վարկավորում | 70,452 | 54,481,211 | – | 297,457 | 3,298,980 | **58,148,100** |
| - Գյուղատնտեսական վարկեր | 13,182 | 54,174,225 | – | 531,631 | – | **54,719,038** |
| - Սպառողական վարկեր | 356,367 | 37,754,782 | – | 151,333 | – | **38,262,482** |
| - Վարկային քարտեր | 1,000,544 | 9,653,699 | – | 74,029 | – | **10,728,272** |
| - Հիփոթեքային վարկեր | – | 9,186,624 | – | 36,703 | – | **9,223,327** |
| - Ոսկու գրավադրմամբ վարկեր | – | 6,422,330 | – | 10,193 | – | **6,432,523** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք զուտ գումարներ | – | 12,676,324 | – | 119,641 | 88,780 | **12,884,745** |

Վերևում ներկայացված աղյուսակում հաճախորդներին տրված բարձր վարկանիշով վարկերը ներկայացնում են վարկային նվազագույն ռիսկ պարունակող վարկերը, որոնք ունեն նվազագույն վարկային ռիսկ կամ ապահովված են բարձր իրացվելի գրավով (դրամական միջոցների կամ պետական երաշխիքի տեսքով): Լավ ֆինանսական դրությամբ և վարկի լավ սպասարկմամբ այլ վարկառուները ներառված են ստանդարտ վարկանիշով վարկերում:

Ժամկետանց վարկերն ու փոխառություններն ընդգրկում են այն վարկերն ու փոխառությունները, որոնք ժամկետանց են մի քանի օր կամ չեն հանդիսանում անհատապես արժեզրկված: Ժամկետանց վարկերի վերլուծությունն ըստ ժամկետների, հաշված վճարման ուշացման պահից, ներկայացված է հաջորդիվ:

Ժամկետանց, բայց անհատապես ոչ արժեզրկված վարկերի վերլուծությունը՝ ըստ վճարման ուշացման ժամկետների, ֆինանսական ակտիվների դասերի կտրվածքով.

| *2017թ. դեկտեմբերի 31* | *Մինչև 30 օր* | *31-60 օր* | *61-90 օր* | *90 օրից առավել* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|
| **Հաճախորդներին տրված վարկեր** | | | | | |
| Կորպորատիվ վարկավորում | 128,491 | 30,183 | 19,973 | 118,810 | **297,457** |
| Գյուղատնտեսական վարկեր | 49,388 | 257,897 | 117,209 | 107,137 | **531,631** |
| Սպառողական վարկեր | 79,416 | 20,505 | 22,373 | 29,039 | **151,333** |
| Վարկային քարտեր | 34,758 | 17,254 | 8,837 | 13,180 | **74,029** |
| Հիփոթեքային վարկեր | 27,091 | 1,230 | 2,076 | 6,306 | **36,703** |
| Ոսկու գրավադրմամբ վարկեր | 5,839 | 1,445 | 718 | 2,191 | **10,193** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 18,226 | 86,023 | 363 | 15,029 | **119,641** |
| **Ընդամենը** | 343,209 | 414,537 | 171,549 | 291,692 | 1,220,987 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Վարկային ռիսկ (շարունակություն)

*Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն*

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների որակական վերլուծություն կատարելիս Խումբն առաջնորդվում է արտաքին վարկանիշերով: Չվարկանշված վարկերը դասակարգվում են ստանդարտ դասի, եթե դրանք արժեզրկված չեն.

| | *Ծան.* | | *Բարձր դաս* | *Ստանդարտ դաս* | *Ստանդար-տից ցածր դաս* | *Արժեզրկված* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների) | 6 | Փուլ 1 | 9,614,084 | 47,502,623 | – | – | **57,116,707** |
| Բանկերին տրված վարկեր և փոխառություններ | 8 | Փուլ 1 | – | 5,743,495 | – | – | **5,743,495** |
| Ներդրումային Արժեթղթեր | 9 | Փուլ 1 | – | 25,265,705 | – | – | **25,265,705** |
| **Ընդամենը** | | | **9,614,084** | **78,511,823** | **–** | **–** | **88,125,907** |

Ստորև ներկայացված է Խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը

| *Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ* | *Ներքին վարկանիշ* | *Դեֆոլտի հավանականություն* |
|---|---|---|
| Aaa to A3 | Բարձր դաս | 0-0.1% |
| Baa1 to B3 | Ստանդարտ դաս | 0.1%-3.4% |
| Caa1 to Ca | Ստանդարտից ցածր դաս | 10.2% |
| C | Արժեզրկված | 100% |

### Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի, իրականացնում է ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը ունի բարձր իրացվելի և տարատեսակ ակտիվների պորտֆել, ինչը դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում հեշտությամբ կիրացվի: Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալից:

Խումբը գնահատում և կառավարում է իրացվելիությունը` հիմնվելով ԿԲ-ի կողմից սահմանած նորմատիվների վրա: Դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նորմատիվները կազմել են`

| | *Սահմանային արժեք* | *2018 թ., %* | *2017 թ., %* |
|---|---|---|---|
| Ն21- Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ) | Նվազագույնը 15% | 28.47% | 28.37% |
| Ն22 - Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) | Նվազագույնը 60% | 170.07% | 178.65% |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա:

Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

| *2018թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ* | *Առևտրային ածանցյալ գործիքներ* | *Մինչև 3 ամիս* | *3-12 ամիս* | *1-5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Զուտ մարվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 49,019 | – | – | – | – | **49,019** |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | – | 31,523 | – | – | – | **31,523** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | – | 76,329,588 | 84,321,410 | 41,162,408 | 13,321,072 | **215,134,478** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | 641,103 | 3,185,108 | 8,538,987 | – | **12,365,198** |
| Այլ փոխառություններ | – | 5,058,211 | 11,007,167 | 66,001,282 | 3,165,117 | **85,231,777** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | – | 3,741,505 | – | – | – | **3,741,505** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **49,019** | **85,801,930** | **98,513,685** | **115,702,677** | **16,486,189** | **316,553,500** |
| **Վարկային բնույթի պարտավորվածություններ** | **–** | **25,405,332** | **–** | **–** | **–** | **25,405,332** |

| *2017թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ* | *Առևտրային ածանցյալ գործիքներ* | *Մինչև 3 ամիս* | *3-12 ամիս* | *1-5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Զուտ մարվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 140,968 | – | – | – | – | **140,968** |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | – | 55,091 | – | – | – | **55,091** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | – | 1,512,944 | – | – | – | **1,512,944** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | – | 77,401,850 | 75,900,468 | 16,319,519 | 10,810,893 | **180,432,730** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | 1,088,299 | 694,993 | 8,423,773 | – | **10,207,065** |
| Այլ փոխառություններ | – | 7,501,829 | 13,255,769 | 49,080,561 | 5,052,553 | **74,890,712** |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | – | 3,987,632 | – | – | 180,985 | **4,168,617** |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **140,968** | **91,547,645** | **89,851,230** | **73,823,853** | **16,044,431** | **271,408,127** |
| **Վարկային բնույթի պարտավորվածություններ** | **–** | **25,064,677** | **–** | **–** | **–** | **25,064,677** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)

Մարման ժամկետների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Այդ մնացորդները աղյուսակում ներառված են մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող գումարներում:

Պահանջները հաճախորդների նկատմամբ ներառում են ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն Բանկը պարտավոր է հետ վճարել նման ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջով: Վերոնշյալ աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ մարման ժամկետների:

### Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում:

*Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով հաստատուն տոկոսադրույքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները (մինչև 2018 թ.-ի հունվարի 1-ը) և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներ (2018 թ.-ի հունվարի 1-ից հետո)՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

| *Արժույթ* | *Բազիսային կետերի ավելացում 2018 թ.* | *Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2018 թ.* | *Կապիտալի զգայունություն 2018 թ.* |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 1.00% | (123,204) | (21,063) |
| ԱՄՆ Դոլար | 0.50% | (15,722) | (209,061) |

| *Արժույթ* | *Բազիսային կետերի նվազում 2018 թ.* | *Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2018 թ.* | *Կապիտալի զգայունություն 2018 թ.* |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 0.80% | 98,563 | 16,581 |
| ԱՄՆ Դոլար | 0.15% | 4,717 | 62,718 |

| *Արժույթ* | *Բազիսային կետերի ավելացում 2017 թ.* | *Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2017 թ.* | *Կապիտալի զգայունություն 2017 թ.* |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 1.60% | (92,880) | (79,788) |
| ԱՄՆ Դոլար | 0.70% | (44,392) | (254,045) |

| *Currency* | *Բազիսային կետերի նվազում 2017 թ.* | *Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2017 թ.* | *Կապիտալի զգայունություն 2017 թ.* |
|---|---|---|---|
| Հայկական դրամ | 3.50% | 203,175 | 174,536 |
| ԱՄՆ Դոլար | 0.08% | 5,073 | 29,034 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 28. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### Շուկայական ռիսկ (շարունակություն)

*Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Ղեկավարությունը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է դրամի նկատմամբ` արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա, երբ այլ փոփոխական արժեքները հաստատուն են (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները` պոտենցիալ զուտ աճը: Ղեկավարությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ:

| *Արժույթ* | *Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2018 թ.* | *Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2018 թ.* | *Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2017 թ.* | *Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2017 թ.* |
|---|---|---|---|---|
| ԱՄՆ դոլար | 3.50% | 25,642 | 3.50% | 204,125 |
| ԱՄՆ դոլար | (3.50%) | (25,642) | (3.50%) | (204,125) |
| Եվրո | 8.00% | 14,741 | 13.70% | 238,731 |
| Եվրո | (8.00%) | (14,741) | (6.30%) | (109,782) |

### Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խումբը գործառնական ռիսկերի կառավարման շրջանակներում ընդունել է եռաշերտ պաշտպանության մեխանիզմը: Պաշտպանության առաջին գիծը ապահովում են առաջնագծի աշխատակազմը և գործառնական կառավարման խումբը,պաշտպանության երկրորդ գիծը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների կողմից, ներքին աուդիտի գործառույթով ապահովվում է պաշտպանության երրորդ գիծը: Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկի քարտեզագրում, միջադեպի վերլուծություն և մշտական վերահսկման գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում  է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում: Կառավարման խորհուրդը սահմանել է թույլատրելի ռիսկի սահմանաչափ գործառնական ռիսկի վրա:

## 29. Իրական արժեքի չափում

### Իրական արժեքի չափման գործընթաց

Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են գույքերը, առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը և ածանցյալ գործիքները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

*(հազար ՀՀ դրամ)*

## 29. Իրական արժեքի չափում (շարունակություն)

### Իրական արժեքի չափման գործընթաց (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պասիվների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

### Իրական արժեքի հիերարխիա

Գնահատման մոդելների միջոցով ֆինանսական ակտիվների իրական արժեքները որոշելու և բացահայտելու համար Խումբը օգտագործում է հետևյալ հիերարխիան:

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. այլ մոդելները, որոնց ելակետային տվյալները ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա,
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Խումբը առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների, ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

| | *Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով* | | | |
|---|---|---|---|---|
| *2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ)* | *Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)* | *Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)* | *Ընդամենը* |
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| - **Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ** | – | 4,368 | – | **4,368** |
| - Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | – | (49,019) | – | **(49,019)** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | – | 25,265,705 | – | **25,265,705** |
| - Բաժնային գործիքներ | 1,680,666 | – | – | **1,680,666** |
| - Չգնանշված բաժնային արժեթղթեր-ընկերություններ ՀՀ-ում | – | – | 95,234 | **95,234** |
| **Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| - Հաճախորդներին տրված վարկեր | – | – | 205,671,911 | **205,671,911** |
| **Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| - Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | – | – | 199,193,275 | **199,193,275** |
| - Թողարկված պարտքային արժեթղթեր՝ ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | – | 5,610,037 | – | **5,610,037** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 29. Իրական արժեքի չափում (շարունակություն)

### Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով<br>Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ) | Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ) | Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ) | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| **Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ** | | | | |
| - Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | – | 27,426 | – | **27,426** |
| - Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | – | (140,968) | – | **(140,968)** |
| **Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ** | | | | |
| - Պարտքային գործիքներ | – | 19,164,723 | – | **19,164,723** |
| - Բաժնային գործիքներ | 1,453,450 | – | – | **1,453,450** |
| **Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ՝** | | | | |
| **Փոխադրամիջոցներ** | – | – | 303,134 | **303,134** |
| **Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| - Հաճախորդներին տրված վարկեր | – | – | 177,418,878 | **177,418,878** |
| **Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| - Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | – | – | 164,614,010 | **164,614,010** |
| - Թողարկված պարտքային արժեթղթեր՝ ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | – | 3,027,096 | – | **3,027,096** |

### Իրական արժեքով չարտացոլված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների և ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի, մոտ են հաշվեկշռային արժեքներին: Այս գործիքների իրական արժեքները դասակարգված են իրական արժեքի հիերարխիայի երրորդ մակարդակում, բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների, որոնք դասակարգված են իրական արժեքի հիերարխիայի առաջին մակարդակում:

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների և ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Հաշվեկշռային արժեք 2018թ. | Իրական արժեք 2018թ. | Չճանաչված եկամուտ/ (ծախս) 2018թ. | Հաշվեկշռային արժեք 2017թ. | Իրական արժեք 2017թ. | Չճանաչված եկամուտ/ (ծախս) 2017թ. |
|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինասական գործիքներ** | | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 206,012,527 | 205,671,911 | (340,616) | 177,513,735 | 177,418,878 | (94,857) |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 201,775,444 | 199,193,275 | 2,582,169 | 166,550,033 | 164,614,010 | 1,936,023 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր – ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | 5,567,619 | 5,610,037 | (42,418) | 2,971,160 | 3,027,096 | (55,936) |
| **Ընդամենը չճանաչված՝ իրական արժեքում փոփոխություններ** | | | **2,199,135** | | | **1,785,230** |

### Գնահատման մեթոդներ և ենթադրություններ

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

*(հազար ՀՀ դրամ)*

## 29. Իրական արժեքի չափում (շարունակություն)

### Գնահատման մեթոդներ և ենթադրություններ (շարունակություն)

*Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին*

Ենթադրվում է, որ իրացվելի և մարման կարճ ժամկետ (մինչև երեք ամիս) ունեցող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին: Սույն ենթադրությունը նաև կիրառվում է ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

*Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժութային սվոպեր են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոպ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ / Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այդ արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, ինչը ընդգրկում է շուկայի կողմից դիտարկելի և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալներ:

*Հիմնական միջոցներ՝ հող, շենքեր և փոխադրամիջոցներ*

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Գնահատման ամսաթվի դրությամբ՝ 2018թ. հոկտեմբերի 30-ին, հողերի և շենքերի իրական արժեքները հիմնված են «Ար Վի էմ Քոնսալտ» ՍՊԸ-ի կողմից իրականացված գնահատման արդյունքների վրա: 2017 թ. հոկտեմբերի 31-ին վերագնահատված փոխադրամիջոցների իրական արժեքը հիմնված է «Ար Վի էմ Քոնսալտ» ՍՊԸ-ի կողմից 2017 թ. հոկտեմբերի 26-ին իրականացված գնահատման արդյունքների վրա:

## 30. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և գրավադրված կամ որպես գրավ պահվող ակտիվներ

### Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջովին չեն ապաճանաչվել

*Հետգնման պայմանագրեր*

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Խումբը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Խումբը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Խումբը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Խումբը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նման ձևով, Խումբն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրավված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Խումբը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

Հետգնման պայմանագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,514,868 հազ. դրամ: Հետգնման պայմանագրերը մարվել են 2018 թ. -ի ընթացքում:

Համապատասխան պարտավորությունները, արտացոլված այդպիսի գործարքների գծով ստացված դրամական միջոցների դիմաց, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են որպես «Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ» 1,510,896 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով:

*(հազար ՀՀ դրամ)*

## 31. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի (ISDA, RISDA և այլն) հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբած հաշվետվությունում:

| *2017թ. դեկտեմբերի 31* | *Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար* | *Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում* | *Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում* | *Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել* | | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | *Ֆինանսական գործիքներ (ոչ դրամական գրավ)* | *Ստացված դրամական ապահովում* | |
| **Ֆինանսական ակտիվի/պարտավորության տեսակը** | | | | | | |
| Պահանջներ բանկերի նկատմամբ՝ հակադարձ հետգնման պայմանագրեր | 2,599,552 | – | **2,599,552** | (2,599,552) | – | **–** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 1,510,896 | – | **1,510,896** | (1,510,896) | – | **–** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը, ըստ սպասվելիք մարման ժամկետների: Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 28–ում՝ «Ռիսկերի կառավարում»:

| | *2018 թ.* | | | *2017 թ.* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Մեկ տարվա ընթացքում* | *Մեկ տարուց ավել* | *Ընդամենը* | *Մեկ տարվա ընթացքում* | *Մեկ տարուց ավել* | *Ընդամենը* |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 72,304,963 | – | **72,304,963** | 70,331,906 | – | **70,331,906** |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 776 | 3,592 | **4,368** | 1,085 | 26,341 | **27,426** |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 3,993,279 | 1,702,532 | **5,695,811** | 8,081,658 | 933,956 | **9,015,614** |
| Ներդրումային արժեթղթեր | 2,023,422 | 25,018,183 | **27,041,605** | – | 20,699,385 | **20,699,385** |
| Հաճախորդներին տրված վարկեր | 28,747,265 | 177,265,262 | **206,012,527** | 39,287,787 | 138,225,948 | **177,513,735** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 5,199,544 | 10,057,913 | **15,257,457** | 5,578,790 | 7,305,955 | **12,884,745** |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | – | 596,093 | **596,093** | – | 382,467 | **382,467** |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | – | 18,402,039 | **18,402,039** | – | 17,383,076 | **17,383,076** |
| Այլ ակտիվներ | 2,964,013 | 1,213,089 | **4,177,102** | 1,607,102 | 1,075,496 | **2,682,598** |
| **Ընդամենը** | **115,233,262** | **234,258,703** | **349,491,965** | **124,888,328** | **186,032,624** | **310,920,952** |
| | | | | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 49,019 | – | **49,019** | 140,968 | – | **140,968** |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 31,523 | – | **31,523** | 55,091 | – | **55,091** |
| Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | – | – | – | 1,510,896 | – | **1,510,896** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 160,464,025 | 41,311,419 | **201,775,444** | 147,438,465 | 19,111,568 | **166,550,033** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | – | 9,031,081 | **9,031,081** | 978,747 | 6,931,564 | **7,910,311** |
| Այլ փոխառություններ | 12,144,805 | 56,424,909 | **68,569,714** | 16,916,018 | 50,630,200 | **67,546,218** |
| Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություններ | 1,001,950 | – | **1,001,950** | 833,453 | – | **833,453** |
| Շահութահարկի գծով հետաձգված պարտավորություններ | – | 387,353 | **387,353** | – | 809,099 | **809,099** |
| Այլ պարտավորություններ | 4,601,810 | 354,775 | **4,956,585** | 5,080,246 | 180,984 | **5,261,230** |
| **Ընդամենը** | **178,293,132** | **107,509,537** | **285,802,669** | **172,953,884** | **77,663,415** | **250,617,299** |
| **Զուտ** | **(63,059,870)** | **126,749,166** | **63,689,296** | **(48,065,556)** | **108,369,209** | **60,303,653** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Կողմերի կապակցված լինելը որոշելիս հաշվի է առնվում կողմերի փոխհարաբերությունների բովանդակությունը, այլ ոչ միայն դրանց իրավական ձևը:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չէին իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

| | *2018 թ.* | | | *2017 թ.* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Մայր կազմակերպություն* | *Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր* | *Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* | *Մայր կազմակերպություն* | *Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր* | *Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* |
| **Համախառն չմարված վարկեր հունվարի 1-ի դրությամբ** | **–** | **–** | **506,295** | **–** | **–** | **425,086** |
| Տարվա ընթացքում տրամադրված վարկեր | – | – | 333,509 | – | – | 445,549 |
| Տարվա ընթացքում վարկերի մարումներ | – | – | (417,589) | – | – | (366,885) |
| Այլ շարժեր | – | – | (4,123) | – | – | 2,545 |
| **Համախառն չմարված վարկեր դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **–** | **418,092** | **–** | **–** | **506,295** |
| Հանած՝ արժեզրկման գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ | – | – | (1,569) | – | – | (5,063) |
| **Զուտ չմարված վարկեր դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **–** | **416,523** | **–** | **–** | **501,232** |
| **Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հունվարի 1-ի դրությամբ** | **–** | **–** | **665,354** | **–** | **–** | **817,513** |
| Տարվա ընթացքում ներգրավված ավանդներ և ընթացիկ հաշիվներ | – | – | 1,372,752 | 2,239,199 | – | 1,431,735 |
| Տարվա ընթացքում մարված ավանդներ և ընթացիկ հաշիվներ | – | – | (1,270,660) | (2,121,801) | – | (1,599,622) |
| Այլ շարժեր | – | – | 15,809 | 4 | – | 15,728 |
| Ընթացիկ հաշիվներ և ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ | **–** | **–** | **783,255** | **117,402** | **–** | **665,354** |
| Պայմանագրային պարտավորություններ և տրված երաշխավորություններ | – | – | – | – | 283,955 | – |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | – | – | – | – | 174,571 | – |

Ստորև ներկայացված է կապակցված կողմերի հետ գործառնություններից եկամուտներն ու ծախսերը.

*Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

| | *2018 թ.* | | | *2017 թ.* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Մայր կազմակերպություն* | *Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր* | *Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* | *Մայր կազմակերպություն* | *Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր* | *Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ* |
| Տոկոսային եկամուտներ վարկերի գծով | – | – | 24,210 | – | – | 21,958 |
| Տոկոսային ծախսեր ավանդների գծով | – | – | 58,357 | 119 | – | 51,661 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Ղեկավար անձնակազմին փոխհատուցումները հետևյալն են.

| | 2018 թ. | 2017 թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ | 1,138,961 | 1,003,491 |

## 34. Դուստր կազմակերպություններ

2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են հետևյալ դուստր կազմակերպությունը.

| Դուստր կազմակերպություն | Բաժնեմաս/ ձայների քանակ, % 2018 թ. | 2017 թ. | Գործունեության հիմնական վայր | Գրանցման երկիր | Գործունեության բնույթ |
|---|---|---|---|---|---|
| «ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ | 100% | 100% | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Վարկային կազմակերպու-թյուն |

2017 թ. նոյեմբերի 2-ին Խումբը ձեռք է բերել «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ -ի քվեարկող բաժնետոմսերի լրացուցիչ 38%-ը՝ իր բաժնեմասը հասցնելով 92%-ի: Չվերահսկվող բաժնեմասի բաժնետերերին որպես դրամային փոխհատուցում վճարվել է 1,323,964 հազ. դրամ: «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը (բացառությամբ ձեռքբերման ժամանակ գուդվիլի արժեքը) այդ ամսաթվի դրությամբ կազմել է 3,657,681 հազ.դրամ, իսկ ձեռք բերված լրացուցիչ բաժնեմասի հաշվեկշռային արժեքը `1,389,919 հազ. դրամ: Դրամային փոխհատուցման և ձեռքբերված բաժնեմասի հաշվեկշռային արժեքի տարբերությունը՝ 65,955 հազ. դրամ, ճանաչվել է սեփական կապիտալի չբաշխված շահույթ հոդվածում:

2017 թ. դեկտեմբերի 28-ին Խումբը ձեռք է բերել «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի քվեարկող բաժնետոմսերի լրացուցիչ 8%-ը՝ իր բաժնեմասը հասցնելով 100%-ի: Չվերահսկվող բաժնեմասի բաժնետերերին որպես դրամային փոխհատուցում վճարվել է 278,729 հազ. րամ: «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը (բացառությամբ ձեռքբերման ժամանակ գուդվիլի արժեքը) այդ ամսաթվի դրությամբ կազմել է 3,683,869 հազ. դրամ, իսկ ձեռք բերված լրացուցիչ բաժնեմասի հաշվեկշռային արժեքը ` 294,710 հազ. դրամ: Դրամային փոխհատուցման և ձեռքբերված բաժնեմասի հաշվեկշռային արժեքի տարբերությունը՝ 15,980 հազ. դրամ, ճանաչվել է սեփական կապիտալի չբաշխված շահույթ հոդվածում:

## 35. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի բաժնեմաս Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (2017թ. դեկտեմբերի 31-ին՝ 49%): Ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է, ինչը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմում է 596,093 հազ. դրամ (2017թ.՝ 382,467 հազ. դրամ):

## 36. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

| | Ծան. | Թողարկված պարտքային արժեթղթեր | Այլ փոխառություններ | Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորություն-ներ |
|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեք 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 17, 18 | **19,533,758** | **80,610,533** | **100,144,291** |
| Թողարկումից մուտքեր | | 6,789,346 | 15,133,284 | **21,922,630** |
| Մարումներ | | (18,372,880) | (28,161,852) | **(46,534,732)** |
| Արտարժութային փոխարկումներ | | (4,383) | 56,924 | **52,541** |
| Այլ | | (35,530) | (92,671) | **(128,201)** |
| **Հաշվեկշռային արժեք 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 17, 18 | **7,910,311** | **67,546,218** | **75,456,529** |
| Թողարկումից մուտքեր | | 2,511,431 | 29,961,360 | **32,472,777** |
| Մարումներ | | (1,450,982) | (29,182,395) | **(30,635,235)** |
| Արտարժութային փոխարկումներ | | 8,253 | 102,087 | **110,340** |
| Ոչ կանխիկ գործարքներ | | 280 | 10,160 | **10,440** |
| Այլ | | 51,788 | 132,284 | **184,072** |
| **Հաշվեկշռային արժեք 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | **9,031,081** | **68,569,714** | **77,600,795** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 36. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն (շարունակություն)

"Այլ" տողում ներառված են թողարկված պարտքային արժեթղթերի և այլ փոխառությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսները: Խումբը դասակարգում է վճարված տոկոսները, որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

## 37. Կապիտալի համարժեքություն

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և որ Խումբն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ՝ նպատակներում, քաղաքականություններում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջներ:

Խումբը, որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ բանկերի համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) չպետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նվազագույն մակարդակը կազմել է 12%: 2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ընդհանուր կապիտալի գործակիցը համապատասխանում է պարտադիր պահանջներին:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության նորմատիվը, որը հաշվարկվել է 1988թ. Բազելյան համաձայնագրի դրույթների համաձայն՝ հաշվի առնելով շուկայական ռիսկը ընդգրկելու գծով հետագա փոփոխությունները, կազմել է՝

| | *2018 թ.* | *2017 թ.* |
|---|---|---|
| 1- ին դասի կապիտալ | 51,921,863 | 49,524,799 |
| 2 -րդ դասի կապիտալ | 4,839,428 | 4,984,676 |
| **Ընդհանուր կապիտալ** | **56,761,291** | **54,509,475** |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ** | **281,383,781** | **242,265,326** |
| **Ընդամենը կապիտալ՝ որպես արտահայտված ռիսկով կշռված ակտիվներից տոկոս (ընդհանուր կապիտալի գործակից)** | **20.17%** | **22.50%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով: